2021, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (595)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

7 դեկտեմբերի

ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած մարտահրավերներին, մասնավորապես հայրենիքի սահմաններին եւ սահմանամերձ բնակավայրերում առաջացած անվտանգային խնդիրներին, կարեւորվեց համընդհանուր ջանքերի մեկտեղումը՝ ի նպաստ առկա հարցերի հաղթահարման եւ հայրենիքի զորացման:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ սփյուռքի համայնքներում առկա կացության եւ ազգային կառույցների կարեւոր առաքելության մասին՝ ազգային ինքնության ու միասնականության պահպանման գործում: Ընդգծվեց նաեւ հայրենիք-սփյուռք կապերի առավել ամրապնդման անհրաժեշտությունը:

9 դեկտեմբերի

ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ռիխտերին:

Նորին Սրբությունը, դեսպանին մաղթելով արդյունավոր առաքելություն Հայաստանում, գոհունակությամբ նշեց, որ դեսպանատան եւ Մայր Աթոռի միջեւ հարաբերությունները մշտապես եղել են ջերմ եւ բարեկամական: Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր շնորհավորանքները փոխանցեց Գերմանիայի ժողովրդին՝ նոր վարչապետի ընտրության կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց Գերմանիայի իշխանություններին՝ պատերազմի եւ հետպատերազմյա շրջանում Հայաստանին ցուցաբերած զորակցության համար:

Դեսպան Ռիխտերն իր հերթին վստահեցրեց Հայոց Հովվապետին, որ կանի հնարավորը՝ երկու երկրների առկա բարեկամական հարաբերությունների առավել խորացման եւ ամրապնդման համար: Խոսելով Գերմանիայի հասարակական կյանքում հայ համայնքի ու Եկեղեցու ներգրավվածության մասին՝ դեսպանն ընդգծեց, որ այն եւս իր նպաստն է բերում երկու երկրների փոխգործակցության զորացման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ հայ ռազմագերիների վերադարձի եւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հոգեւոր, պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ միջազգային տարբեր ատյանների կողմից տարվող աշխատանքներին:

13 դեկտեմբերի

Պաղեստինի՝ Եկեղեցիների հարցով բարձրագույն նախագահական կոմիտեի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պաղեստինի՝ Եկեղեցիների հարցով բարձրագույն նախագահական կոմիտեի ղեկավար Մուին Էլիաս Յուսեֆ Խուրիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի կողմից «Կովերի պարտեզ» կալվածքի վարձակալության հանձնելու խնդրին, ինչպես նաեւ հայկական քրիստոնեական սրբավայրերի եւ պատմամշակութային ժառանգության պահպանության հարցերին: Կարեւորվեց եկեղեցիների ու կրոնների միջեւ հարաբերությունների եւ երկխոսության զորացումը:

Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված 9 զինծառայողների հուղարկավորության եկեղեցական կարգը

Դեկտեմբերի 2-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված եւ մեկ տարի անց Հայաստանին վերադարձված 9 զինծառայողների հուղարկավորության եկեղեցական կարգը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց նահատակ քաջորդիների սգակիր ընտանիքներին եւ ներկաներին.

«Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր հավաքվել ենք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու խնկաբույր

կամարների ներքո՝ դեպի հավերժություն ճանապարհելու հայրենիքի պաշտպանության համար նահատակված մեր քաջազուն որդիներին: Մեր խիզախ զինվորների նվիրական մասունքների առջեւ խոնարհում ենք բերում նրանց լուսավոր հիշատակին, հիշում նրանց արիությունն ու սխրանքները: Հրաժեշտի այս պահին վերհիշում ենք արցախյան պատերազմի ողբերգական իրադարձությունները, մեր ողջ պատմության ընթացքում մեզ պատուհասած աղետներն ու արհավիրքները, գոտեպնդվում փորձություններին դիմակայելու մեր ժողովրդի զավակների զորեղ կամքով, աննկուն տոկունությամբ ու վճռականությամբ: ➥ էջ 2

Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված 9 զինծառայողների հուղարկավորության եկեղեցական կարգը

➥ էջ 1

Պատերազմից ավելի քան մեկ տարի անց, չսպիացած վերքերը մեր սրտերում, խոնարհում ենք բերում մեր ազգին արժանավոր որդիներ պարգեւած, սնած ու դաստիարակած ծնողներին: Սուրբ Հոգու մխիթարությունն ենք խնդրում պատերազմում ծնող, ամուսին, զավակ եւ կամ հարազատ կորցրած սգացյալ ընտանիքներին, որոնք անասելի ցավ կրեցին. ցավ ու կորուստ, որ ամենքինս է:

Սիրելիներ, հայրենիքին իր կյանքն ընծայաբերած անձը միշտ անմահ է, միշտ հաղթանակող է: Ռազմի դաշտում մեր սիրեցյալ զավակներն ուժ առան, զորացան Վարդանանց հերոսամարտի՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» կարգախոսով: Այդ ոգով ու գիտակցությամբ նրանք վկայեցին իրենց սերն ու նվիրումն առ հայրենին եւ իրենց հեղած արյամբ նվիրագործեցին որդիական հավատարմությունն ու նախանձախնդրությունը՝ հանդեպ հարազատ ժողովուրդն ու արժեքները: Մեր քաջարի զինվորների անօրինակ սխրագործություններն արձանագրված են մեր նորօրյա պատմության էջերում եւ ոգեշնչող պիտի լինեն ապագա սերունդների համար՝ ապրելու առ Աստված, առ ազգն ու հայրենին նույն սիրով ու նվիրումով:

Մենք՝ ամենքս, պարտք ունենք մեր նահատակ հերոսների հանդեպ, որոնք, համաձայն պատմահայր Խորենացու խոսքերի, «մահկանացու ծնվելով՝ անմահ հիշատակ թողեցին»: Մենք՝ ամենքս, պարտք ունենք նրանց անմահ հիշատակի առջեւ՝ իրագործելու նրանց երազները, ապահով, շեն ու բարօր դարձնելու Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, որի պաշտպանության համար նրանք իրենց կյանքն ընծայեցին:

Մենք հավատում ենք, որ մեր սիրելի զավակները երկնքում պիտի արժանանան Տիրոջ տեսությանը, երկնային լույսերի ու փառքի մեջ հավիտյան ապրելու երանությանը, եւ նրանց համար պիտի հնչի մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոսքը. «Եկէք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. Իե 34):

Աղոթական այս պահին, սիրելիներ, ի խորոց սրտի հայցենք Ողորմած Տիրոջը, որ հանգստություն ու խաղաղություն պարգեւի Իր հավատարիմ ծառաների հոգիներին եւ մխիթարություն ու սփոփանք՝ նրանց ծնողներին, հարազատներին ու մերձավորներին: Հայցենք, որ մեր երկրի համար դժվարին այս ժամանակներում զորացնի մեր ժողովրդին հույսով, հավատով ու սիրով՝ ծանր փորձությանը համբերությամբ եւ տոկունությամբ դիմակայելու, ցավն ու նեղությունները քաջաբար հաղթահարելու եւ ամեն ջանք ներդնելու մեր հայրենիքի պաշտպանության եւ զորացման կենսական առաքելության մեջ:

Թող երկնավոր Տերն Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո ապահով ու անվտանգ պահի Հայոց բանակի քաջազուն զորականներին եւ հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

Հանգեք խաղաղությամբ, անմահ նահատակներ, մեր ժողովրդի սիրելի՛ զավակներ:

Խունկ, աղոթք եւ օրհնություն անմահացած մեր զինվորների լուսավոր հիշատակին այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն»:

Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 4-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչներ սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Դեռեւս 2015 թվականին տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով հռչակվել է աստվածամուխ Սուրբ գեղարդի ուխտի օր: Այդ օրը հավատացելոց օրհնության համար դուրս է բերվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական սրբությունը:

Բերկրառատ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, մատուցվեց սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը:

Պատարագին ներկա էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ եւ ուխտավորներ:

Պատարագի ընթացքում եկեղեցական թափորի առաջնորդությամբ Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի կողմից մատուռ-մկրտարան բերվեց աստվածամուխ սուրբ գեղարդը: Սրբազան հայրն օրհնեց ներկա ժողովրդին, ապա հավատացյալներին հնարավորություն ընձեռվեց երկրպագելու եւ համբուրելու հրաշագործ սրբությունը:

Սրբազան արարողության ընթացքում հայր սուրբը, անդրադարձ կատարելով տոնի խորհրդին, ի մասնավորի նշեց. *«Ցնծում են այսօր Հայոց Եկեղեցին եւ նրա ուխտապահ ժողովուրդը, քանզի նշում ենք մեր Եկեղեցու հիմնադիր առաքյալների տոնը, որոնք Քրիստոսի սիրո վարդապետության սերմերը ցանեցին դրախտավայր Հայաստանում, քրիստոնեությունը դարձավ «մաշկի գույն», իսկ դարերի բովում հայը միշտ վերահաստատեց ս. Պողոս առաքյալի խոսքերը. «Ո՞վ կարող է մեզ բաժանել Քրիստոսի սիրուց. նեղությո՞ւնը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգը, թե՞ սուրը»* (Հռոմ. Ը 35)*:*

Այս օրը մեզ համար վերանորոգության, վերաքրիստոնեացման եւ մշտապես ուղղափառ դավանանքի խոստովանության օրն է: Ճիշտ է՝ ժամանակներն ու արժեքները փոխվել են, բայց անխախտ են մնացել Տիրոջից փոխանցված ճշմարիտ հավատքը, հավատարմությունն Աստծու եւ մեր նախնիների դավանած արժեքների հանդեպ: Ուստի այսօր եկել ենք նաեւ սուրբ առաքյալների բարեխոսությունը հայցելու Տիրոջ մոտ, մեր սերն ու հավատարմությունը վերահաստատելու Հայոց Եկեղեցու նկատմամբ, ինքնաճանաչվելու եւ առավել զորանալու՝ ուխտելով, որ անաղարտ կպահենք ուղղադավանությունը, հավատարիմ կլինենք մեր հայրերի եւ վարդապետների թողած հարուստ ժառանգությանն ու բարոյական արժեքներին եւ երբեք չենք լքի այն հողը, որ ոռոգվել եւ պտղաբեր է դարձել մեր առաքյալների ու նախնիների թափած թանկագին արյամբ»:

Ներկայացնելով առաքյալների նահատակության պատմությունը՝ հայր Զաքարիան հաստատեց, որ այն համակ սեր է Տիրոջ եւ հայ ազգի հանդեպ, եւ նրանց ոտնակոխ վայրերը սրբատեղիներ են դարձել հայության համար՝ հավատքի մեջ հաստատվելու եւ անկորնչելի հույսով ապրելու համար:

Իր քարոզում պատարագիչ հայր սուրբն օրվա խորհրդի լույսի ներքո անդրադարձավ նաեւ հայրենիքի գաղափարին՝ մասնավորապես ընդգծելով. *«Աստծուց մեզ տրված մեր հայրենիքը սրբազան եւ նվիրական է, քանզի այս հողի վրա են իրենց արյունը թափել Քրիստոսի առաքյալներն ու մեր քաջ նախնիները: Այն այլեւս հող չէ սովորական իմաստով, այլ հայրենիք, որի առաջ ամենքս ունենք մեր պատասխանատվությունն ու պարտականությունները: Հայրենի հողը գուրգուրանքի եւ սիրո կարիք ունի, բայց առավել եւս՝ այդ հողի վրա ապրելու եւ արարելու անհագ ցանկություն եւ կամք»*:

Վերջում հայր Զաքարիան հորդորեց հավատացյալներին՝ հայցել սուրբ Թադեոսի եւ սուրբ Բարդուղիմեոսի բարեխոսությունը հայ ազգի համար, որպեսզի առաքելական հավատքը զորացնի ու պահպանի ամենքին, իսկ այսօր դուրս բերված սուրբ գեղարդը շարունակի հրաշագործել եւ պահպանել Հայոց աշխարհը:

Սուրբ Պատարագի ավարտին Մուշեղ սրբազանը Պահպանիչ աղոթքով եւ հրաշագործ սուրբ գեղարդով օրհնեց ներկա ժողովրդին:

Աստվածամուխ սուրբ գեղարդը Մայր Աթոռի մատուռ-մկրտարանում մնաց մինչեւ երեկոյան ժամերգության ավարտը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Հայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի՝ 1830–1918 թթ. հոգեւոր-լուսավորչական գործունեությունը

Սկիզբը՝ թիվ 21–22

1850–1870-ական թթ. հասարակական-մշակութային կյանքը գաղութում վերստին վերելք է ապրել, դրանում մեծ էր Հովհաննես եւ Գաբրիել Այվազովսկի եղբայրների ավանդը: Մեծ ծովանկարիչը Ս. Սարգիս եկեղեցուն է կտակել Սուդակի հովտում գտնվող իր կալվածքի պատկառելի մասը, որի վաճառքից ստացված 50 հազար ռուբլու տոկոսները մինչեւ 1920 թ. ծախսվել են եկեղեցու եւ ծխական դպրոցի կարիքների համար:

1858 թ. Գաբրիել վրդ. Այվազովսկու նախաձեռնությամբ Թեոդոսիայում հիմնվում է «Խալիբեան» վարժարանը: Դպրոցը պահվել է Նոր Նախիջեւանի նախկին քաղաքագլուխ, մեծահարուստ վաճառական Հարություն Խալիբյանի նվիրատվությունների, եկեղեցական գումարների եւ սովորողների կատարած մուծումների հաշվին: Գիշերօթիկ դպրոց էր, որտեղ սովորել են հայ երեխաներ՝ անկախ բնակության վայրից եւ դավանանքից: Ուսումնարանի վարչության իրավասությանն են պատկանել ուսուցիչների նշանակումը, դասագրքերի եւ դասավանդման մեթոդների ընտրությունը: Դասավանդվել են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն եւ թուրքերեն, հավասարապես նաեւ բոլոր այն առարկաները, որոնք Ռուսաստանում եւ Եվրոպայում կազմել են գիմնազիական միջնակարգ կրթության հիմունքները (թվաբանություն, երկրաչափություն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, ֆիզիկա, կրոնագիտություն, նկարչություն, գեղագրություն, մարմնամարզություն եւ այլն): Թուրքերենը դասավանդվել է արեւմտահայ, իսկ ռուսերենը՝ արեւելահայ երեխաների համար: Առաջին ուսումնական տարում վարժարանն ուներ 39 աշակերտ, 1860–1861 թթ.՝ 139, 1862–1864 թթ.՝ 92, 1866–1867 թթ.՝ 62: Դասընթացը բաժանվում էր 6 դասարանի:

Ուսումնարանի ընդհանուր կառավարումն իրականացրել է նրա վերատեսուչ Գաբրիել Այվազովսկին: «Խալիբեան» վարժարանի վերատեսուչներ են եղել Գ. Այվազովսկին, Ս. Տիգրանյանը (1865 թվականից): 1860–1861 թթ. վարժարանում գործել է մեծահասակ կանանց եւ տղամարդկանց գիտելիքներ հաղորդելու լսարան: 1862 թ. սեպտեմբերին կատարվել է ուսումնարանի նորակառույց շենքի հանդիսավոր բացումը: «Խալիբեան» ուսումնարանն ուներ հիվանդանոց, տպարան, որը հրատարակում էր հայերեն եւ ռուսերեն դասագրքեր, գեղարվեստական, պատմական, թարգմանական գրականություն, տարեգրքեր: Թեոդոսիայում հրատարակվել են «Մասեաց աղաւնի» (1860–1865 թթ.), «Դաստիարակ» (1873–1874 թթ.) պարբերականները: Այվազովսկու հեռանալու եւ եկեղեցական գումարներից զրկվելու հետեւանքով վարժարանը 1871 թ. փակվել է:

XIX դ. Կերչը դարձել է Ռուսական կայսրության առեւտրական կարեւոր կենտրոններից մեկը, եւ տեղի հայերի միջոցով իրականացվել է Ազովի ծովի ավազանի երկրների եւ արտասահմանի հետ կատարվող առեւտրի նկատելի բաժինը: Կերչում հայերի թիվն աստիճանաբար ավելացել է եւ XX դ. սկզբին հասել շուրջ 1600-ի: XIX–XX դդ. համայնքում գործել են հայկական եկեղեցի, ծխական դպրոց, հոգաբարձություն:

Ղարասուբազարը XVII–XVIII դդ. ղրիմահայ խոշոր գաղութներից էր՝ Ղրիմի ներքին եւ արտաքին առեւտրի ճանաչված կենտրոն: XIX դ. հայերն այստեղ բնակչության թվով երկրորդն էին՝ թաթարներից հետո: 1897 թ. հայերի թիվը կազմել է շուրջ 3 հազար: Ղարասուբազարում է նստել Ղրիմի Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր իշխանությունը: 1816–1920 թթ. գործել է ծխական դպրոց:

Յալթայում հայերը հաստատվել են XIII դ.: Ռուսաստանին միանալուց հետո Յալթայում ապրող հայերի թիվն աճել է եւ XIX դ. վերջին հասել մոտ 1000-ի: 1909 թ. սկսվել եւ 1917 թ. ավարտվել է Յալթայի Սուրբ Հռիփսիմե հայկական եկեղեցու շինարարությունը (ճարտարապետ՝ Գ. Տեր-Միքելյան, քանդակները եւ խորանի ձեւավորումը կատարել է նկարիչ, քանդակագործ եւ հնագետ Տարագրոսը (Տեր-Վարդանյան)): 1917–1920 թթ. Յալթայի հայկական եկեղեցու պատերը, խորանը, գմբեթը նկարազարդել է ականավոր նկարիչ Վ. Սուրենյանցը (պահպանվել է միայն գմբեթի նկարազարդումը): 1921 թ. ապրիլի 6-ին նա վախճանվել է եւ հուղարկավորվել Յալթայի հայկական եկեղեցու բակում:

Սեւաստոպոլի հայ համայնքը կազմավորվել է XIX դ. կեսին: 1897 թ. այստեղ ապրել է շուրջ 900 հայ: Հայերն ունեցել են իրենց աղոթատունը, 1913 թ. հիմնել են Ռափայել Պատկանյանի անվան «Հայ Գրիգորեան» ընկերությունը:

Ստարի Կրիմ (թաթարական անվանումը՝ Էսկի Կրիմ, հայկականը՝ Հին Ղրիմ, Սուրխաթ, ջենովականը՝ Սոլկատ) քաղաքը հիմնվել է XIII դ.: Հայերն այստեղ բնակվել են քաղաքի հիմնադրումից ի վեր: Սուրխաթ անունը, որը մերձակա լեռանը տրված հայերեն «Սուրբ Խաչ» անվան ջենովական աղավաղված ձեւն է, ինքնին վկայել է այնտեղ հայերի մեծաթիվ լինելը: Իրենց թվով հայերը գերազանցել են քաղաքի այլազգի բնակիչներին: 1892 թ. քաղաքում ապրել է շուրջ 2 հազար հայ: ➥ *էջ 4*

Գիտատեխնիկական առաջընթացի հետեւանքների բիոէթիկական ուսումնասիրության հիմնահարցեր

Վախենում եմ ես՝ այնքան խոր տեսնես,
Որ հողագնդի կործանմանն հասնես:
Մարդու ահավոր իմաստությունը
Վաղը կքանդի մարդկության տունը:

Հովհաննես Շիրազ

Մարդկության գոյության երկրորդ հազարամյակի ավարտը եւ անցումը պատմության երրորդ հազարամյակ նշանավորվել են համաշխարհային պատմական գործընթացի բնույթի, տեմպերի էական փոփոխություններով: Այդ անցումի պայմաններում համաշխարհային պատմության դեպքերի եւ իրադարձությունների հարահոսում երեւակվում են ճգնաժամային երեւույթներ:

Ավելի ու ավելի ակնառու է դառնում ժամանակների խզման «ֆենոմենը», երբ ապագան գրոհում է արտասովոր արագությամբ: Մեկ սերնդի աչքի առջեւ ծագում եւ կործանվում են համաշխարհային ամբողջատիրական կայսրություններ, իրականացվում է իր անակնկալությամբ վեհացունց թռիչք՝ համայնավարական իդեալների սոցիումից դեպի հետսոցիալիստական հասարակություն, սրընթաց փոփոխվում է աշխարհի քաղաքական քարտեզը, երբ 20-րդ դարի երկրորդ կեսին առաջանում էր ներկայումս գոյություն ունեցող պետությունների ավելի քան կեսը:

Աշխարհը ներառված է գիտատեխնիկական առաջադիմության թռիչքաձեւ զարգացումներում: 20-րդ դարում հայտնագործվեցին նոր՝ մեգաաշխարհներ եւ միկրոաշխարհներ, իսկ գիտելիքների ինֆորմացիոն (տեղեկատվական) զանգվածը բազմապատկվում է աննախադեպ արագությամբ:

Մարդիկ արդեն չեն հասցնում հարմարվել փոփոխությունների այդպիսի տեմպին: Առաջանում է սոցիալական վիթխարի հակասություն, որը կոչվել է ֆուտորշոկ (*Encyclopedia of Bioethics*, *Stephen G. Dost, editor of chief, 2004, 2-nd ed., p. 12*, *Биоэтика: вопросы и ответы, под. ред. Б. Г. Юдин и П. Д. Тищенко, М., 2003*):

Մենք սկսում ենք գիտակցել, որ մարդկությունը հայտնվել է սեփական հզորության թակարդում: Գիտատեխնիկական առաջադիմությունը մարդը վերածել է էկոլոգիական ճգնաժամի, որի հետեւանքները դժվար է կանխատեսել: Առաջացել է ջերմամիջուկային ինքնաոչնչացման սպառնալիք:

Ճշմարտության հանդեպ անտիկ ժամանակներից եկող սերը վարկաբեկվել է զանգվածային ոչնչացման զենքի արտադրությանը կամ արհեստական մարդու ստեղծմանը միտված գիտելիքի ցինիզմով: Եվ գլխավորը՝ մարդկությունը վերածվում է տեխնիկական ինքնանպատակ ռազմավարության գործիքային միջոցի: Կորսվում են գոյություն ունեցողի նկատմամբ սերը, երկյուղածությունը, նրա նկատմամբ հարգալից վերաբերմունքը եւ, որ առավել կարեւոր է, կեցության, կյանքի բոլոր դրսեւորումների նկատմամբ պատասխանատվությունը:

Դրա վկայությունը հայերի ցեղասպանությունն էր, որը կրկնվեց հրեաների Հոլոքոստով: Եթե մարդկությունը ժամանակին «ո՛չ» ասած լիներ Հայոց եղեռնին, ամենայն հավանականությամբ հրեական Հոլոքոստ չէր լինի:

Իսկ արդյոք դասեր քաղվե՞ց: Արդյոք գիտակցեցի՞նք, որ անտարբերությունը չարիք է եւ մեղսակցություն…

Ամբողջատիրական վարչակարգերի փլուզումը երկրորդ հազարամյակի ավարտին ցույց տվեց եւս մի արտասովոր երեւույթ:

Խորհրդային սոցիալիզմի փլուզումն առաջացրեց «բացարձակ սխալի» աննախադեպ իրադրություն՝ պարզ դարձնելով, որ մարդկության նշանակալի մասի ռեսուրսները եւ ջանքերը ծախսվել են պատմական գերխաբկանքների իրականացման համար:

Կարծես ակներեւ է դարձել, որ երկրի վրա անհնար է կառուցել դրախտ, կարելի է միայն կանխել դժոխքը: Դա նշանակում է, որ մարդկության համաշխարհայինպատմական գործունեությունն սկսում է կողմնորոշվել ոչ թե դեպի համընդհանուր երջանկության հասնելը, այլ պայքարելն ապակառուցողական կործանարար ուժերի դեմ: Իզուր չի ասվում, որ տեխնածին վթարների վտանգը հավասարազոր է պատերազմների վտանգին: Չի վերացել նաեւ ջերմամիջուկային ոչնչացման սպառնալիքը:

«Մենք ապրում ենք անկայուն աշխարհում. այսօր փոփոխությունները նույնական չեն առաջադիմության հետ, քանի որ մեծամասշտաբ փոփոխությունը կարող է հանգեցնել «պատահական ոչնչացման»… եւ դա ոչ միայն ռազմական պատճառներով (*Силуянова И. В. «Вызов биоэтики сегодня»: Католический сипозиум по биоэтике сегодня. Альфа и Омега, Москва, 1998,* №*4*):

Համաշխարհայնացման գործընթացները ցույց են տալիս, որ տարածաշրջանային առումով առանձին երկրներում արդիականացման փորձերը կարող են հաջող ավարտ ունենալ, սակայն համաշխարհային պատմության մասշտաբով բոլոր հեղինակավոր ծրագրերը, որոնց հետ կապվում էր կապիտալիզմի կամ սոցիալիզմի պատմական առաքելությունը, չարդարացրին մարդկության հույսերը:

Ցավալի է, բայց փաստ, որ դրանցից եւ ոչ մեկը չհանգեցրեց այնպիսի երեւույթների վերացմանը, ինչպիսիք են աղքատությունը, ուղղակի կամ քողարկված գործազրկությունը, հանցագործությունը, ապագայի նկատմամբ անվստահությունը, մարդու սոցիալական անպաշտպանվածությունը: Մարդկությունն իր պատմության երկրորդ հազարամյակի սկզբում արդեն փորձարկել է սոցիալական երջանկության հասնելու հնարավոր գաղափարների, նախագծերի, ուտոպիաների մեծամասնությունը եւ համոզվել դրանց նվազ իրագործվելիության մեջ:

Այդ պայմաններում պատմության ռազմավարական կողմնորոշիչների փոփոխությունը դարձել է անհրաժեշտություն: Այդ անհրաժեշտությունը հստակ ձեւակերպվել է Ռասել-Էյնշտեյնի 1955 թվականի հայտնի հուշագրում, որը դարձավ Պագուոշյան շարժման մանիֆեստը եւ այնուհետեւ սկսեց կոնկրետ կերպով հաշվի առնվել Հռոմի ակումբի նախագծերում, ՄԱԿ-ի գործունեության մեջ եւ արդիականության տարբեր ինտելեկտուալ շարժումների փաստաթղթերում:

Ներկայումս արդիականության ինտելեկտուալ ռազմավարությունները կողմնորոշվում են դեպի անձի իրավունքների հիմնարար նշանակությունը: Հենց դրանով է պայմանավորված բարոյաիրավական հիմնահարցերի աճող ազդեցությունը տնտեսական, քաղաքական, սոցիալական, ազգային, էկոլոգիական խնդիրների լուծման գործում:

Մեր ժամանակներում վերստին օրակարգի հարց է դառնում գիտատեխնիկական, տնտեսական, քաղաքական, էկոլոգիական վերափոխումների էթիկական մեկնաբանության կամ փորձաքննության հիմնահարցը: Դա էլ հիմք է տալիս կենսաբարոյագիտական թեմատիկան առանձնացնելու՝ որպես սոցիալ-փիլիսոփայական ուսումնասիրությունների ինքնուրույն ոլորտ:

Հիմնահարցի արդիականությունը պայմանավորված է նախեւառաջ այն հանգամանքով, որ գիտատեխնիկական առաջադիմության բարդ ու հակասական բնույթը, սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական եւ բարոյական փոփոխություններն անհրաժեշտություն են առաջացնում նորովի իմաստավորելու մարդկային քաղաքակրթության, բուն կյանքի արժեբանական հիմքերը: ➥ *էջ 7, 8*

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը



Սկիզբը՝ թիվ 12–22

Թ.

Ժամանակակից հայ արձակում գրական հերոսների մի յուրահատուկ պատկերաշար է ստեղծում Աղասի Այվազյանը: Նրա «Ընտանիքի հայրը», «Փառահամար», «Սինյոր Մարտիրոսի արկածները» գրքերում զետեղված պատմվածքները ներկայացնում են կյանքը գեղագիտական որոշակի սկզբունքներով վերարտադրող մի հեղինակի:

Կյանքի գեղագիտական յուրացման տեսակետից մասնակի նրբերանգային տարբերություն կա Այվազյանի «Ընտանիքի հայրը», «Սինյոր Մարտիրոսի արկածները» ժողովածուներում եւ «Փառահամար»-ում զետեղված պատմվածքների միջեւ: Առաջին երկու գրքերում կյանքի պատկերները ներկայացվում են իրական, սովորական վիճակների մեջ, հաջորդում նկատելիորեն ավելանում է կյանքի ու իրականության ընկալման եւ գեղարվեստական վերարտադրման պայմանականությունը:

«Եռանկյունի»-ն մանկան անմիջական դիտողականությամբ վերարտադրված կյանքի մի պատկեր է, ուր ներկայացվում են եռանկյունի դարբնոցի եւ նրա հինգ դարբիների հարաբերությունները, բնավորությունները: Այվազյանն իր հերոսներին միաձուլում է անկեղծության, տխրության, ինչ-որ չափով ծիծաղելիության հոգեբանական շաղախով եւ ստեղծում նրբերանգներով հարուստ մի պատմություն: Դարբնոցի հինգ Մկրտիչներից ամեն մեկն ունի իր ոճն ու ինքնուրույն նկարագիրը, սակայն դա չի խանգարում, որ ամբողջությամբ այդ կերպարները լրացնեն իրար, եւ ամեն մեկը յուրովի շարունակվի մյուսի մեջ: Բաց հոգու տեր, անսահման բարի, մի քիչ տխուր, մի քիչ պարզունակ մարդիկ են Մկրտիչները, որոնք իրենց կյանքով, իրենց երգերով, սերերով, արկածներով, իրենց դարբնոցով՝ ապրող հիշատակ են դառնում փոքրիկ Հովիկի համար:

«Եռանկյունի» պատմվածքի հերոսների մեջ առանձնահատուկ ոչինչ չկա, նրանք ոչ մի մեծ բան չեն անում, սովորական ձեւով ապրում են իրենց կյանքը: Այդ սովորական աննկատ կյանքն էլ՝ իր դեպքերով ու մարդկանցով, դառնում է Այվազյանի ստեղծագործության հիմնական նյութը: Մանրաքանդակ դրվագումներով նա ստեղծում է այդ կյանքի հետաքրքրական պատկերներ: Այս առումով ուշագրավ գործեր են նաեւ «Սինյոր Մարտիրոսի արկածները» գրքում զետեղված «Ես՝ իմ մայրը», «Սուրբ ճշմարտություն», «Վանոն եւ գորոդավոյը»: Սակայն միշտ չէ, որ Այվազյանը կարողանում է ապահովել նյութի գեղարվեստական խորությունն ու ստեղծել ավարտուն պատմվածքներ: Հատկապես վերջին գրքում քիչ չեն դրվագային, անավարտ, սոսկ տպավորությունների ու զգայությունների թռուցիկ արձանագրություններ հիշեցնող պատմվածքները («Շշուկ», «Կիրճը», «Հին թախտը», «Ալեքսանի բարձը», «Ծեր Եպրաքսին եւ նրա տարեց տղան»):

Այվազյանի նշված գործերից շատերին, ընդհանրապես, նրա գեղարվեստական մտածողությանը բնորոշ են պրիմիտիվիզմի որոշ տարրեր: Դա նա բերել էր Թիֆլիսից, Թիֆլիսի քաղաքային միջավայրից, այդ միջավայրի նկարիչ Փիրոսմանիից: Սա որքան գաղափարական, մտավոր հարազատություն է, նույնքան էլ բնածին է ու կենսաբանական: Պրիմիտիվիզմն ակնառու է եւ նյութի ընտրության, եւ նյութի գեղարվեստական մշակման, եւ հերոսների պատկերման ասպարեզում: Գեղագիտական այս կողմնորոշումն ուշագրավ նրբերանգներ է հայտնում սովորական դեպքերի ու պատմությունների մեջ:

Այվազյանի նախընտրած նյութը շատ դեպքերում խնդրահարույց ուղղվածություն չունի, ինչի հետեւանքով եւ նրա հերոսները հանրային նշանակությամբ չեն առանձնանում, այլ ավելի շատ մնում են կենցաղայինի, առօրեականի շրջանակներում: Տվյալ նյութի սահմաններում հեղինակի նպատակադրումը նրբերանգների հայտնաբերման եւ չնկատված ծալքերը բացահայտելու մեջ է: Այս տեսակետից սովորական նյութն անգամ, ենթարկվելով հեղինակի ստեղծագործական մշակմանը, ստանում է անսովոր տեսք, ինչը պայմանավորված է հեղինակի գրական սկզբունքներով: Հեղինակի նպատակը միայն գրական հերոսների կերպավորումը չէ, այլեւ պատկերվող կյանքի կերպավորումը, ինչի հետեւանքով նրա գրական հերոսը, ինքնավար գոյությամբ ապրելու հետ մեկտեղ, երբեմն չի բարձրանում նյութից եւ չի դառնում գլխավոր նպատակ, այլ ընդհակառակը՝ ձուլվում է նյութին, եւ պատկերվող կյանքն ու հերոսը մնում են նույն հարթության վրա:

Անսովոր ու մի քիչ էլ տարօրինակ վիճակների մեջ են ներկայացվում «Փառահամար» ժողովածուի պատմվածքների հերոսները, որոնց միջոցով ներկայացվում է մտածելու եւ կյանքն ընկալելու մի նոր տարբերակ:

Ոգեւորության ու ներշնչանքի մի յուրահատուկ պահի մեջ է ներկայանում «Փառահամար» պատմվածքի հերոս ձեռնածուն: Նա հրաշքներ է գործում, եւ կյանքը զարմանք է թվում նրան: Կրկեսային հերթական աճպարարության ժամանակ նա այն զգացողությունն է ունենում, որ կյանքում անհնարին ոչինչ չկա: Ոգեւորության պահ է՝ ձեռնածուն իր ներսում աներեւակայելի ցանկություններ է ունենում, ինքն իր զգայությունների ու մտապատկերի մեջ ստեղծում այդ ամենը, զարմանում իր երեւակայության ստեղծածի վրա եւ հավատում դրանց իրական գոյությանը: Զարգացվում է այն միտքը, ըստ որի՝ ամեն ինչ ավելի կատարյալ ու ամբողջական է ներքին աշխարհում: Պատրանքով ապրելու պահն է ներկայացնում հեղինակը, հերոսին կտրում իրերի առկա վիճակից եւ գցում մի այնպիսի դրության մեջ, երբ կարող են նրա բոլոր ներքին ցանկություններն առարկայանալ եւ շրջապատել իրեն: Սա արդեն երեւակայությամբ ստեղծված կյանքի հատկանշական պահերից մեկն է, ուր իրական կյանքի «...վախերը, կիսատ սերը, կիսաճշմարտությունը», որոնք հերոսի ապրելու համար ոչ մի հաճելի գրգիռ չէին կարող ստեղծել, ծածկվում են ոգեւորության մշուշով, ներշնչանքի ու ոգեւորության մեջ կատարելագործվում եւ անշոշափելին դարձնում շոշափելի ու իրական:

Այսպիսի պայմանական մի վիճակ ստեղծված է նաեւ «Հեքիաթ» պատմվածքում: Հեղինակը՝ որպես իրականություն, ներկայացնում է այնպիսի մի իրավիճակ, ինչը հավանաբար ստեղծվել է հերոսի երազի մեջ եւ նրա երեւակայության արգասիքն է: Այվազյանը որպես իրական վիճակ ներկայացնում է հերոսի զգայախաբությունը (հալյուցինացիան): Այն ամենը, ինչ ցուցադրվում է, մտքի ստեղծած խաղն է. այդ խաղին մասնակցելու կամ այն հասկանալու համար պետք է իմանալ նրա օրենքները, որի առաջին կետերից մեկը սա է. «Իմ բոլոր շարժումները կատարվում էին ուղեղումս եւ իրականությանը այնքան մոտ, որ ես չգիտեի, ուրիշ ինչ կերպ պետք է սկսվի իրական շարժումը»,– այս խոսքերն ասվում են պատմվածքում եւ նախնական պայմանավորվածություն ստեղծում գործի եւ ընթերցողի միջեւ: Այս բնույթի է նաեւ «Փախուստ»-ը. երեւակայության մեջ ստեղծածը դարձյալ հերոսին իրականություն է թվում: Վիճակն այսպիսին է. մեկն անտառում յոթ տարի թաքնվելուց հետո եկել ներկայացել է քննիչին եւ ասում է՝ ինքը հանցագործ է, սպանել է իր կնոջը, նրա սիրեկանին եւ մի միլիցիոների. որ ձերբակալեն իրեն: Քննությունը պարզում է, որ նա ոչ ոքի չի սպանել, յոթ տարի առաջ անհետացել է տնից եւ թաքնվել անտառում: Երեւակայության բորբոքման ժամանակ նրան թվացել է, թե խանդի պահին ինքը սպանություններ է կատարել, այնինչ այդ ամենը դարձյալ մտքի զգայախաբություն է: Հիվանդագին ինչ-որ բան կա այս հերոսի մեջ, այնքան է ինքն իրեն ներշնչել, թե ինքը հանցագործ է, որ, ի վերջո, փաստորեն հասել է հոգեկան խանգարման եւ հիմա արդեն դժվարանում է զանազանել իրականն ու երեւակայականը: ➥ *էջ 6, 8*

Հայ Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի՝ 1830–1918 թթ. հոգեւոր-լուսավորչական գործունեությունը

➥ *էջ 3*

XIX դ. վերջին քառորդին Սիմֆերոպոլի, Եվպատորիայի եւ Թեոդոսիայի տնտեսական նշանակության բարձրացմանը զուգահեռ՝ Սուրխաթի դերն ընկել է: Հայերն սկսել են տեղափոխվել այլ քաղաքներ. 1902 թ. այստեղ բնակվել է ընդամենը 410 հայ:

Սուդակի (Սոլդայա, Սուրոժ) հայ համայնքը ձեւավորվել է XII դ.: XIV–XV դդ. հայերը թվով գերազանցել են քաղաքում բնակվող մյուս ազգերին: Սուդակի մերձակայքում հիմնվել են հայկական գյուղեր՝ իրենց եկեղեցիներով: XIX–XX դդ. քաղաքում գոյատեւել է փոքրաթիվ հայ համայնք:

Այսպիսով՝ միջնադարյան Ղրիմում գործել են տասնյակ հայկական եկեղեցիներ ու վանքեր: Ռուսական տիրապետության շրջանում ղրիմահայ եկեղեցական գործերը մինչեւ 1803 թ. վարել է Նոր Նախիջեւանի հոգեւոր առաջնորդությունը: 1803 թվականից սկսել է գործել ղրիմահայոց հոգեւոր կառավարությունը (նստավայրը՝ Ղարասուբազար): Մինչեւ XIX դ. կեսը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ղրիմում պահել է կաթողիկոսական հաջորդ (առաջնորդական փոխանորդ), որին 1840 թվականից փոխարինել է ղրիմահայ եկեղեցիների եւ Ս. Խաչ վանքի հոգաբարձուն: 1810–1840 թթ. փոխանորդի աթոռը զբաղեցրել են եկեղեցական գործիչներ Մանուել վրդ. Գյումուշխանեցին, Թադեւոս վրդ. Բեկզադյանը: Գլխավոր հոգաբարձուի պաշտոնում նշանակվել են աշխարհիկ ճանաչված գործիչներ, որոնք վարել են եկեղեցու ֆինանսատնտեսական գործերը, պաշտպանել նրա շահերը ռուսական իշխանությունների եւ այլոց առաջ: 1801–1810 թթ. Նոր Նախիջեւանի, Ղրիմի եւ առհասարակ Նովոռուսիայի հայոց հոգեւոր առաջնորդը եղել է Եփրեմ արքեպիսկոպոսը (1809–1830 թթ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս): Այնուհետեւ ղրիմահայ համայնքն անցել է 1812 թ. ստեղծված Բեսարաբիայի թեմի, իսկ ապա 1830 թ. կազմավորված Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի ենթակայությանը:

XIV–XVIII դդ. Ղրիմում գործող հայկական գրեթե բոլոր վանքերին ու եկեղեցիներին կից հիմնվել են դպրոց-դպրատներ, կրթարաններ, որոնցում աստվածաբանությունից բացի՝ ուսուցանվել են թվաբանություն, տոմարագիտություն, գրչության արվեստ, մանրանկարչություն եւ այլ առարկաներ: Նշանավոր էին Ստարի Կրիմի Ս. Խաչ վանքի դպրոց-ճեմարանը եւ Կաֆայի Ս. Անտոն վանքի դպրատունը:

XIX–XX դդ. գաղութի հիմնական կրթական հաստատությունները եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցներն էին: Առաջին ծխական դպրոցը բացվել է 1816 թ. Ղարասուբազարում՝ Մանուել Գյումուշխանեցու ջանքերով: XX դ. սկզբին Տավրիկյան նահանգում գործել է հայկական ծխական 9 դպրոց՝ 23 ուսուցչով եւ 240 աշակերտով: Կրթական մակարդակով առանձնապես աչքի է ընկել «Խալիբեան» ուսումնարանը:

Ղրիմի հայկական եկեղեցիների ծխական հոգաբարձություններն ստեղծվել են XIX դ. վերջին – XX դ. սկզբին՝ Սիմֆերոպոլի, Ղարասուբազարի, Արմյանսկի Բազարի, Կերչի, Թեոդոսիայի եւ Եվպատորիայի հայկական եկեղեցիների ծխական համայնքների կողմից եւ գործել մինչեւ 1913–1920 թթ.: Նրանց խնդիրն էր օգնել եկեղեցու աղքատ ծխականներին, հիմնել դպրոցներ, աղքատանոց եւ աստվածահաճո այլ հաստատություններ: Եկամուտները գոյացել են աղքատներին օգնելու համար եկեղեցում առանձնացված դրամագլխից, բարեգործական նպատակներով կատարված կտակներից եւ նվիրատվություններից:

Այսպիսով՝ ռուսահայերի կյանքում կարեւոր դեր է ունեցել եկեղեցին: Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդները, իրենց գործունեության ամբողջ ընթացքում, առանձնահատուկ նվիրումով են աշխատել, եկեղեցիներ կառուցել, վերանորոգել, ինչպես նաեւ ուսումնական հաստատություններ հիմնել: Հայաշատ գրեթե բոլոր բնակավայրերում հիմնվել են հայկական եկեղեցիներ, բացվել դպրոցներ: Թեմական առաջնորդներն ազգային ինքնության ու մշակույթի պահպանման, ազգային կրթության ու լուսավորության վերելքի գործում մեծապես կարեւորել են եկեղեցու եւ կրթական հաստատությունների դերը:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մեծ եղեռնի արձագանքներն ու վավերագրությունը «Հայաստան» պարբերականի էջերում...

Սկիզբը՝ թիվ 22

Ռանձին նյութով («Եղեռնի օրերը Հապուսիի մէջ») նկարագրվում է Խարբերդի դաշտի ամենաբարգավաճ բնակավայրերից մեկում տեղի ունեցած նախճիրի գործողությունը. «1915 ապրիլի այս օրերը, սեւ օրերը կուգային խամրեցունելու Հապուսիի անմեղ գիւղական կեանքը, աւեր ու քանդ անելու Խարբերդի միակ շէնշող գիւղը» (*նույն տեղում*):

Հետաքրքիր է, որ անգամ ժամանակի ականատեսները ճիշտ են հասկացել եւ գնահատել եղեռնի կազմաբանությունը, թուրքական իշխանությունների կողմից տեղի ունեցած իրադարձությունների պլանավորված լինելն ու որոշակի սցենարով իրագործումը:

Խարբերդի դաշտի այս շեն ու շռայլ գյուղում եւս, ինչպես ամենուր, կոտորածի ու թալանի սկիզբն ու ընթացքը գրեթե նույնակերպ են ընթանում. «Աղէտը սկսած էր, գիւղիս հարստութեան մէկ կարեւոր մասը կազմող ոչխարները, կովերը, եզները եւ այս կարգի կենդանիները մէկիկ-մէկիկ բռնի կը տարուէին: Հաւեղէնները, պարէն ու պաշար թալանելով սպառնալիքի տակ կը տարուէին» (*նույն տեղում*):

Այնուհետեւ սկսվում է զենքի բռնագրավման գործընթացը. «1915 մայիսի սկզբներն էր. Տեղւոյս Միւտիրը հրամայեց, որ բոլոր հայերու քով գտնուող զէնքերը իսկոյն հաւաքուին, ըսելով որ ասկե առաջ Սահմանադրութիւն էր եւ ազատ էին զէնք կրելու, իսկ այժմ կառավարութիւնը կը հրամայէ որ բերեք ու յանձնեք իբրեւ հաւատարիմ հպատակներ, քանի որ թիւրքերն ալ իրենց զէնքերը պիտի յանձնեն» (*նույն տեղում*): Այս մեթոդը թուրքական իշխանությունները կիրառել են շատ անգամ եւ շատ վայրերում: Ցերեկով, առերեւույթ թուրք հասարակությունից էլ հավաքում էին զենքերը, իսկ գիշերով այն վերադարձնում եւ զինում ամենահետին թուրքին անգամ:

Հապուսիում զենքերի մի մասը հանձնում են, բայց թուրք իշխանավորները հասկանում են, որ դա ամբողջը չէ, եւ շրջանային կառավարիչը ոստիկանական համալրված ուժերով գալիս է գյուղ եւ հրամայում. «Պէտք է յանձնէք ձեր բոլոր զէնքերը եւ նոյն իսկ ձեր քով գտնուող դանակները… Հավաքեցին մեզ մօտ գտնուող մեր զէնքերը եւ գացին» (*նույն տեղում*): Սակայն մի քանի օր անց սույն գործողությունը նորից կրկնվում է: Այս անգամ ծեծում, անարգում, տանջամահ են անում գյուղի տարիքով եւ հեղինակավոր մարդկանց. «Միւտիրը խիստ զայրացած հրամայեց ոստիկաններու, որ գիւղին մեծերը պատիժներու ու ծեծերու ենթարկէր ամենադառն միջոցներով» (*նույն տեղում*):

Ահա եղեռնական օրերի դասական մի օրինակ, որը կրկնվեց Արեւմտյան Հայաստանի հարյուրավոր բնակավայրերում ամիսներ շարունակ:

1917 թ. օգոստոսի 19-ին «Հայրենի նամակի» խորագրի ներքո տպագրված ակնարկում նկարագրվում է Կարինից դեպի Երզնկա տանող ճանապարհին ընկած Ըլըճա գյուղի ապրած ողբերգությունը: Այս գյուղի 100 տուն հայությունից «հիմա կը գտնուի հազիւ 4 տուն 18 անդամներով, մնացեալ ամբողջ գիւղացիները Մեծ եղեռնին զոհ գացած էին: Գտնուած հայութիւնը ամեն ջանք կը թափէ գիւղի վերաշինութեան, բայց չիկա եւ ոչ մի օգնութիւն դուրսէն, որ կարողանա իրենց նպատակին հասնել» (*նույն տեղում*): Խոսվում է նաեւ հարեւան Մամախաթուն գյուղի կացության մասին, որը նույնպես ավերակ վիճակում է: Կրկին ընդգծվում է, որ գաղթական հայությունն ամեն տեղ էլ ողբալի դրության մեջ է, խղճահարույց, բայց «Քղիի հիւսիսային մասին մէջ եղող փոքրաթիւ հայ գաղթականութեան վիճակը իր անախանձելիութեամբը կը գերազանցէ բոլորը, բաղդի բերմամբ կենտրոններէ հեռի ինկած ըլլալուն համար» (*նույն տեղում*):

Պարբերականի էջերում հաճախ թղթակցություններ ու նամակներ էին տպագրվում Կարին (Էրզրում) քաղաքից եւ նրա շրջակայքից: Կարինից ուղարկված սույն նամակը խիստ հուզախառով լիցքերով է պարուրված. «Կանցնիմ մէկիկ-մէկիկ հայոց թաղի փլատակներուն առընթեր: Ազգ, առաջնորդարանը քանդուած, Ս. Աստուածածին եկեղեցւոյ զանգակատունը փլցուած, Արծնեան վարժարանը այրուած: Ո՞ւր է «Յառաջը», ո՞ւր է երիտասարդութիւնը, ո՞ւր է վերջապէս զարթ կեանքը՝ նախկին Կարնոյ:

Չկա՛ն: Ասոնց հակապատկերն է որ կը ցցւի անցորդի աչքին» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 99*): Ամեն կողմ որբերի ներկայութիւն՝ լռին ու խոհուն, անմեկնելի իրենց գիտակցութեանը՝ կատարուած աննախադէպ նախճիրին անհասանելի…

«Հայաստանը» ուշադրության առանցքում էր պահում Միջագետքը, ուր հազարավորներ «մեր միսէն ու արիւնէն, կտոր-կտոր քայքայումի մը մէջ այլեւս չեն սպասեր վաղուան արշալոյսին» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 97*):

Հեղինակն ամենեւին չի սաստկացնում գույները, երբ նշում է, որ ահարկու եւ ճգնաժամային գոյության մեջ է գալարվում օսմանյան երկրի հայությունը, «որուն կեանքը որքան հաւատարմութենէն, այնքան սովէն կախում ունի» (*նույն տեղում*):

Պատկերն ավելի հուսադրական չէ գրավյալ շրջաններում: Ահա խտացված արտահայտությունը վերոհիշյալ մտորումների. «Ունինք հայ գիւղացին, կամ անոր ստուերը գրաւուած շրջաններուն մէջ, լաւագոյն հայը՝ որ պիտի յուսար եւ որմէ սակայն կը խզեն ամեն յոյսի առիթ» (*նույն տեղում*):

«Հայրենի նամակի» շարքում «Ծննդավայրիս մէջ թափառական» վերնագրված նյութը հրամցնում էր Դերջանի գավառակի երեկն ու այսօրը: Դերջանի գավառակը, որը հայտնի էր ցորենի եւ գարու անբավ շտեմարաններով եւ բավարարում էր ոչ միայն Կարինի եւ Երզնկայի ազգաբնակչությանը, այլեւ օսմանյան զորքերի կարիքները, այժմ ամայի պատկեր է ներկայացնում: Պատերազմի դաժան հետեւանքները «ամէն կողմ կը ցցւին առջեւդ:

➥ էջ 6

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏԸ

Սկիզբը՝ թիվ 22

Աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրությունը հաստատում է այդ տպավորությունները: Հետեւենք Մատթեոսի ու Մարկոսի տարբերակներին: Հիսուսը հենց նոր էր շունչը փչել. հարյուրապետը բացականչում է. «Այս մարդը հաստատ Աստծո Որդին էր»: Այդ մի քանի բառերի մեջ երկու առանձնահատկություն է աչքի զարնում:

Նախ՝ պիտի սպասեին, որ նա ասեր. «Նա Աստծո Որդին է»: Պետրոսը խոստովանում է. «Դու կենդանի Աստծո Որդին ես» (Հովհ. Ա 49): Մարթան բացականչում է. «Տէր, ես հավատում եմ, որ դու ես Որդին Աստծո» (Հովհ. ԺԱ 27): Դեւերը թողնում են հիվանդներին՝ բարձր գոչելով. «Դո՛ւ ես Աստծո Որդին» (Ղուկ. Դ 41, Մարկ. Գ 11): Ավետարաններում ամենուր, որտեղ մի նախադասության մեջ բառը գտնվում է շեշտված *դու* դերանվան ու *ես* բայի հետ, ամենուր, որտեղ կա դավանանք առ Աստծո Որդի Հիսուսին, առկա է *ն* որոշյալ հոդը:

Երբ հարյուրապետը խոսում է, Հիսուսն արդեն մահացել էր: Ուրեմն՝ այդ սպան այլեւս չի կարող դիմել Նրան: Նա իր նախադասությունը պիտի ձեւակերպի երրորդ դեմքով. «Այս մարդը...»: Եթե նա խոսեր ինչպես Պետրոսը, Մարթան, Նաթանայելը, մի՞թե չպիտի դներ որոշյալ հոդ: Արդ, այն բացակայում է:

Երբ այդ հոդը դրվում է, դավանանքն արտահայտում է մի իրականացած սպասում. Հիսուսը «նա է, ով պետք է գա»,– ճշգրտում է Մարթան, «Քրիստոս»,– ասում են Պետրոսն ու Մարթան, «Իսրայելի թագավորը»,– ավելացնում է Նաթանայելը: Այդ հավատացյալները հույս էին տածում Փրկչի գալստյան հանդեպ: Եվ ահա, Քրիստոսի մեջ նրանց բաղձանքն իրականանում է: Նրանք այլեւս կարիք չունեն մեկ ուրիշին սպասելու...

Հարյուրապետի՝ առանց հոդի արտասանած բառը մի նոր երանգ է ստանում: Այն այլեւս չի նշանակում մարդ, այլ նկարագրում է նրա հատկությունները: Սահմանում է նրա լինելու ու գործելու եղանակը: Հիսուսը մտածում, խոսում, գործում է որդիաբար կամ աստվածորեն, որպես մեկը, ով ունի Աստծո Որդու հատկություն: Այլեւս խոսք չկա ո՛չ սպասման, ո՛չ խնդրանքի կատարման մասին: Մենք բոլորովին այլ տեղանքում ենք: «Աստվածավախը» չէ, որ խոսում է այստեղ. այդ մարդը գալիս է հեթանոս աշխարհից:

Մեր դիտարկումը ճշգրտվում է մի երկրորդ նկատառումով: Պիտի սպասեինք, որ ասվեր. «Այս մարդը Աստծո Որդին է»: Պողոսը Դամասկոսում քարոզում է, «որ Հիսուսը Աստծո Որդին է» (Գործք. Թ 20): Հովհաննեսի առաջին թուղթը խոստանում է Աստծո հետ հաղորդություն բոլոր նրանց, ովքեր դավանում են, որ «Հիսուս Աստծո Որդին է»: «Նա, ով հավատում է, որ Հիսուսը Աստծո Որդին է, աշխարհի հաղթողն է» (Ա Հովհ. Դ 15, Ե 5):

Այդ առաքյալները եւ բոլոր նրանք, ովքեր հավատում ու դավանում են նրանց նման, ապրում են Քրիստոսի մահվանից հետո: Իր ազդարարության պահին հարյուրապետը նույն իրավիճակում է, ինչ նրանք: Եթե նա խոսեր ինչպես Պողոսը, Հովհաննեսն ու մյուսները, արդյո՞ք իր նախադասությունը չպիտի կազմեր ներկա ժամանակով: Բայց տեսնում ենք, որ այն անցյալով է:

Քրիստոսի մահվան պահին չարագործը հավաստել էր, որ Հիսուս գալու է իր թագավորությամբ: Այդ «հիշի՛ր ինձ»-ը արդեն լի է քրիստոնյաների՝ իրենց Տիրոջ հարության հանդեպ հավատքով: Հիսուս Քրիստոսը միայն չի ապրում. նա Կենդանի է, կյանքի Իշխանն է, կյանքի Հացը, հենց ինքը Կյանքն է...

Հարյուրապետի կողմից դրվելով անցյալով՝ նախադասությունը արմատապես փոխում է իր իմաստը: Խաղը խաղարկված է: Ամեն ինչ վերջացած է: Մարդկային կյանքն ավարտվում է այն ամենով, ինչն անշրջելի է մահվան մեջ: Այլեւս միջոց չկա դրանից դուրս գալու: Հոգեվարքը գեղեցիկ էր. դրա մասին դեռ կխոսեն: Բայց դա չեն կարող անել այլ կերպ, քան ոգեկոչելով տխուր հիշողություններ, քանի որ այդ ամենը պատկանում է արդեն ընդմիշտ անցած մի ժամանակաշրջանի: Անցյալ անկատարը դավանանքը զրկել է դրա քրիստոնեական բնույթից: Այդ մարդը հավատքի մարդ չէ:

Բառերը, որոնցով Ղուկասը հաղորդում է հեթանոս սպայի վկայությունը, գալիս են հաստատելու մեր նկատառումը: Ըստ երրորդ ավետարանչի՝ հարյուրապետն ասել է. «Իրոք որ այս մարդն արդար էր»: Այստեղ էլ որոշյալ հոդը չկա: Արդ, Պետրոսը Հոգեգալստյան իր քարոզի մեջ մեղադրում է. «Բայց դուք ուրացաք այն Սրբին ու Արդարին» (Գործք Գ 14): Ստեփանոսն առաքյալներ է անվանում «նրանց, ովքեր նախօրոք ազդարարում էին Արդարի գալուստը» (Գործք Է 52): Դամասկոսում Անանիան ասում է Պողոսին. «Մեր հայրերի Աստվածը նախ քեզ ընտրեց, որ Արդարին տեսնես» (Գործք ԻԲ 14): «Արդար» ասելով, որը որոշյալ հոդով է դրված, Անանիան, Ստեփանոսը, Պետրոսը նկատի ունեն Հիսուսին: Արդարեւ, այդ անվան տակ հրեաները սպասում էին իրենց Օծյալին: Մի՞թե Աստված չէր ասել. «Դավթի շառավղից ես արդարության սերմ պիտի բուսցնեմ»: Երեմիա ԼԳ 15-ի այս հատվածը հաստատվել էր ժողովարանի կողմից. «Այս օրերին... ես արդարության Օծյալին կոգեկոչեմ»: Բանն այն է, որ նա կատարելու է աստվածային կամքը ու այն իրականացնելու է ամեն տեղ, ուր Օծյալն իրավունք ունի՝ որպես «Արդար»:

Արդ, մեր հարյուրապետի խոսքերն այդ Արդարին չեն ուղղված: Հոդը բացակայում է: Հարյուրապետը ի դեմս Հիսուսի չի տեսնում իր երազանքների կերպարին: Նա պարզապես նկարագրում է, թե ինչպիսին է այն մարդը, որին ինքը հսկում է. նա անմեղ է: Նա ոչ մի վատ բան չի արել: Նրա տեղը Խաչի վրա չէ: Եթե նա այնտեղ է գտնվում, ապա ուրիշի մեղքով: ➥ էջ 7, 8

Վաթսունականների արձակագիրներ.

Ժամանակը եւ հերոսը

➥ *էջ 4*

Իրականն ու երեւակայականը միախառնվում են նաեւ «Փառահամար», «Բոլերո», «Հեքիաթ» պատմվածքներում:

Գեղարվեստական այս նախասիրության համար կա անցյալի փորձը: Չարենցը մի շարք գործեր ունի երազների ու զառանցանքների մասին: Տեսիլներն ու մտապատրանքներն անպակաս էին նաեւ 20-րդ դարասկզբի հայ պոեզիայից: Զգայախաբությունների երանելի հեքիաթը հորինեց Գաբրիել Գարսիա Մարկեսը եւ այն համարեց գերբնական իրապաշտություն, որ այլ բան չէ, քան մոգական իրապաշտությունը: Այվազյանը, ահա, այս ոլորտում է, եւ նրա ստեղծագործությունները պետք է դիտարկել այս շրջանակում:

Այս տեսանկյունից քննելով՝ որոշ չափով անսովոր է նաեւ «Թիֆլիսի ցուցանակները» պատմվածքի հերոսի՝ Գրիգորի կերպարը: Նա անչափ բաց ու անկեղծ մարդ է, եւ նրան թվում է, թե դա է մարդու բնական ձեւը: Գուցեեւ դա այդպես է: Հեղինակն այսպես է ներկայացնում իր հերոսին. «Բաց էր Գրիգորը, ասում էր ամեն ինչ, հարցնում էր ամեն ինչ: Պատմում էր իր կասկածների մասին, քերում-հանում էր իր ներսը եւ ցույց տալիս... Վերջում, երբ նրան թվում էր, որ դիմացինն իրեն լավ գիտի, Գրիգորը այդ դիմացինին՝ ուրիշին իր ներսն էր տանում, որ նա տնօրինի այնտեղ: Տարօրինակ մի բան գիտեր Գրիգորը. եթե ինքը չանկեղծանա, չբացի իր թուլությունները, իր վախերը, իր հավատը, իր տգեղությունը, ապա ինքը չի ապրի: Թաքցնել իր իսկական զգացածը՝ ցավը, ուրախությունները, պոռթկումը, անօգուտ խոսքը, վախը, նշանակում է թաքցնել իրեն եւ ստեղծել մի ուրիշ մարդ իր փոխարեն: Այդ մարդը միայն թվացող է, ուրիշների աչքի համար պատրանք, թղթից շինած... Իսկ ինքն ուղղակի չի ապրի: Ու դրա համար Գրիգորը պահանջ էր զգում ներքին ճշմարտության. դա միակ փաստն էր նրա գոյության»: Գրիգորը ցանկանում է ոչ միայն ինքն իր մեջ լինել այն, ինչ կա իրականում, այլ այդպես ներկայանալ շրջապատին, իրեն խորթ դիմակներ չկրել, չծամածռել սեփական լինելության կերպը: Գրիգորի այս խառնվածքն անչափ բնական է ու ճիշտ, բայցեւ անսովոր, որովհետեւ միայն նա է այդպիսին: Գրիգորի անկեղծությունը ջերմացնում էր մարդկանց, իսկ երբ նա մեկուսանում է Թիֆլիսից, քաղաքի վրա ասես իջնում է անտարբեր ու սառը մի գորշություն, եւ մարդիկ կարծես օտարանում են իրար: Քաղաքին պակասում էր բոլորին միավորող Գրիգորի անկեղծությունը:



Տարբեր խառնվածքի մարդկանց քիչ անսովոր, քիչ տարօրինակ հատկանիշերով Այվազյանը կարողանում է հետաքրքրական իրավիճակներ ստեղծել: Նրա համար կարեւորը պատմությունները, դեպքերի ընթացքն ու նկարագրությունները չեն, այլ այդ առիթներով արված դիտարկումները, թափանցումները, բացահայտումները, խորացումները, ճեղքումները, այնքան, մինչեւ հասնի միջուկին: Այս առումով իրական հերոսներ նա չի ստեղծում: Դրանք մտացածին գրական կերպարներ են, որոնք չեն կարող ապրել ինքնավար կյանքով, այլ միայն հեղինակի խոհերի մեջ եւ առաջին հերթին այդ խոհերի կրողներն են՝ որպես հեղինակի ներքին ուրվատեսլային փոխակերպությունների արտահայտություն:

Նաեւ պահի, վիճակի բանաստեղծական ընկալում ունի Այվազյանը, նա ներկայացնում է հոգեբանական որեւէ վիճակ, վերարտադրում տվյալ իրադրության կամ վիճակի պոեզիան եւ ստեղծում համապատասխան զգացողության տեր հերոսներ: Այս առումով առանձնանում է «Բոլերո»-ն: Անմիջապես ներկայացումից հետո բալետի պարուհիները հավաքվել են նշելու իրենց գործընկերոջ 70-ամյակը: Բոլորը կանայք են: Միայն դիմահարդարն է իր հետ բերել «հերթական» տղամարդուն՝ Ադամին: Եվ ահա այդ տղամարդու ներկայությունը բոլոր կանանց ներսում մտքեր ու գրգիռներ է առաջացնում, նրանց մեջ կենդանացնում վաղուց մեռած պոեզիան եւ ներքին բռնկումներ ստեղծում: Ադամի, այսինքն՝ Տղամարդու մեջ պարուհիները կորած, չգտնված ու որոնած սեր են տեսնում: Պատմվածքում այլեւս ոչ մի գործողություն չկա: Ադամն է եւ պարուհիները: Ամեն մեկը փորձում է Ադամին ձեւել ըստ իր ճանաչած որեւէ տղամարդու պատկերացման: Սակայն Ադամը ոչ ոքի չի նմանվում: Ադամը գեղեցիկ է, ինչպես իրենց պատկերացումները կատարյալ տղամարդու մասին: ➥ *էջ 8*

Մեծ եղեռնի արձագանքներն ու վավերագրությունը «Հայաստան» պարբերականի էջերում...

➥ *էջ 5*

Կանցնինք Սանսա-Տէրէսին, ուր Եփրատը կուլ տուաւ հազարաւոր հայ զինուորներ եւ շատ դերջանցիներ թրքական գնդակներէն եւ յաթաղանէն հալածական: Այժմ տասնեակ հազար զոհերու աղեխարշ եւ սրտաճմլիկ պատմութիւններով Եփրատը կը գալարուի միշտ դէպի առաջ նոր զոհեր խլելու Երզնկայի Կամխայ եւ Խարբերդ դաշտերէն անցնող գաղթականներէն» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 106*):

Նամակ-ակնարկի ավարտին գծագրվում է Երզնկան. փողոցներն ամայի, տները քարուքանդ, ավերակների իսկական համայնապատկեր...

«Ջարդերը եւ փախստականները» հոդվածում քննության է առնվում Բաղդադում եւ նրան կից շրջակայքում պատսպարված հայ կանանց ու երեխաների վիճակը՝ նշելով, որ ամենագովելի գործը, «որ առաջ տարվելու վրայ է հիմա Պաղտատի մէջ, ջարդերէն ազատուած հայ կիներու եւ երեխաներու ազատագրութիւնն է» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 107*): Բազմաթիվ հայ երիտասարդ կանայք բացահայտվում են մահմեդական ընտանիքների եւ ապաստարանների միջից եւ հանդիպում են շատ երեխաներ, որոնք իրենց որդեգրող ընտանիքներում «մնացեր էին մէկ կամ աւելի տարիներ եւ մոռցեր էին իրենց մայրենի լեզուն» (*նույն տեղում*):

Նոր ազատված գաղթականների մասին մանրմասնվում է Խնուսից ուղարկված ակնարկաշարում: Նրանք՝ 108 անձ, 1917 թ. օգոստոսի 30-ին հասել են Խնուս՝ սովից եւ երկարատեւ ճանապարհային երթից բոլորն էլ հյուծված ու ուժասպառ: Այն աստիճանի տկարացած են, որ ոտքի վրա կանգնելու կամ նստելու անընդունակ են, ամբողջ օրը պառկած են խոտի վրա: Ըստ հասած տեղեկությունների՝ նրանք «ամբողջ երկու տարի ապրեր են վայրենի բանջարներով, սովը եւ տարափոխիկ հիւանդութիւնները հազարաւոր կեանք են խլեր իրենց շարքերէն» (*նույն տեղում*):

«Հայրենի նամականին» տեղեկություններ էր հաղորդում նաեւ Եկեղիքի գյուղերի վերաբերյալ: Նամակագիրը գրում է. «Մէկիկ-մէկիկ կայցելեմ գիւղերը... ամայի, քայքայուած եւ այլակերպ: Ո՛չ քացուորը կայ դաշտերը եւ ո՛չ մակատեղիները՝ ուր հարիւրաւոր հարսներ, աղջիկներ սիթիլներով կը փութային կաթ կթելու: Ո՛չ դպրոցականներու երգ ու պարը կան եւ ո՛չ զանգակներու ղողանջը» (նույն տեղում):

Տպավորությունն ու զգացողությունն այն աստիճանի սոսկալի ու հրեշավոր են, որ մարդ ակամայից «կը սոսկայ, կը կարծէ, որ սխալ տեղ եկած է, ուր մարդկային ոտքը տակաւին ոտք կոխած չէ, եւ ուր օձերն ու գազանները հիմա պիտի յօշոտեն քեզ: Բոլոր գիւղերը նոյն վիճակին են» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 110*):

Թերթում նույն այս ակնարկային ոճով ու տրամաբանությամբ տեղեկություններ կան Կեսարիայի հայության ջարդերի եւ կոտորածների վերաբերյալ: Տարբեր վայրերում կատարվածը տարբեր ականատեսների վկայություններով նույնանում է: Այո՛, թուրք ջարդարարության, ալան-թալանի թուրքական ձեռագիրն ու ոճը նույնն են ամեն տեղ, ամենուրեք:

Եվ դա առաջինը փաստել են սույն ականատեսներն ու վերապրողները՝ մինչ պատմաբաններն ու հետազոտողները դա կանեին ու կապացուցեին գիտականորեն՝ գիտական ուղիներով եւ մեթոդներով: Ահա այսպես ականատեսը՝ կեսարացի Մելքոն Մյուվտիվրյանը, փաստեր է ներկայացնում Կեսարիայի հայության ապրած ողբերգության վերաբերյալ: 1915 թ. թուրքական իշխանությունները խաբեությամբ ու ուխտադրժորեն հավաքեցին հայերի մոտ եղած դրամական ու նյութական միջոցները: Ապա իշխանությունները հրահանգում են հավաքել հայերի մոտ եղած զենքն ու ռազմամթերքը: Հայերը, երբ հայտնում են, որ զենք չունեն իրենց մոտ պահած կամ թաքցրած, դա պատրվակ է հանդիսանում թուրք ռազմական պատասխանատուների համար բոլոր հայ տղամարդկանց բանտարկելու: Ապա հայերին «սկսեցին ենթարկել զանազան դժոխային չարչարանքների, գամում էին ոտքն ու ձեռքերը տախտակների վրայ, դանակով կտրատում էին նրանց մարմնի զանազան մասերը եւ մէջը աղ լցնում, որպէսզի նրանք ասէին իրենց զէնքերի պահեստների մասին» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 110*): Եվ երբ փարատվում են իշխանությունների կասկածները՝ հայերի զինված լինելու վերաբերյալ, նրանք ձերբակալում են երիտասարդներին եւ առանձին-առանձին խմբերով տանում «անորոշ ուղղութիւններով», իսկ «... նախապատրաստուած թիւրք խուժանը զինուած սպասում էր նրանց կիրճերում եւ արահետներում, ուր եւ երիտասարդութեանն բոլորովին մերկացնելուց յետոյ կոտորում եւ դիակները թափում էին բաց երկնքի տակ» (*նույն տեղում*):

Եվ երբ երիտասարդությունը կոտորվել էր արդեն, սկսվում է ժողովրդի մնացած հատվածների տեղահանությունը՝ Հալեպի ուղղությամբ, ուր եւ «թիւրք կանոնաւոր զօրքի հետ պաշիպօզուկների խուժանը սպասում էր նրանց բնաջնջելու: Առ այդ սկսուեց առեւանգումը գեղեցիկ կանանց եւ աղջիկների եւ փոքր երեխաների, իսկ մնացեալ ժողովուրդը մասսայական կերպով ենթարկուեց կոտորածի» (*նույն տեղում*):

Ահա եղեռնի իրագործման թուրքական հաշվարկն ու կազմաբանությունը: Թերթում ակնարկներ էին տպագրվում Արեւմտահայաստանի գրեթե բոլոր գավառների վերաբերյալ, նկարագրվում նրանցում մահաբեր տարիներին տեղի ունեցածը, տեղեկություններ հաղորդում ներկա վիճակի մասին: Այս առումով «Հայաստանը» առաջինն ստեղծեց ու կազմավորեց Մեծ եղեռնի վերաբերյալ ամբողջական վավերագրությունը, որն արժանահավատ էր, քանզի լիովին հիմնված էր ականատեսների խոսքերի ու վկայությունների վրա:

Բացի եղեռնի վավերագրությունից՝ թերթը մշտապես տեղեկություններ էր հաղորդում գաղթականների տեղաշարժի, նրանց կացության վերաբերյալ: Հաճախակի էին ակնարկներն ու անդրադարձները որբերի կացության ու խնամքի, որբանոցներում տիրող իրավիճակի մասին:

«Թրքահայերը հայրենիքէն դուրս» խորագրով տեղեկություններ էին հաղորդում Ռուսաստանի եւ այլ երկրների տարբեր քաղաքներում ապաստան գտած արեւմտահայերի եւ նրանց կազմավորած հայրենակցական միությունների գործունեության վերաբերյալ: Հաճախ էին արեւմտահայ փախստականներն ու տեղի հայ հայրենասերներն արդյունավետ համագործակցություն ծավալում: Օրինակ՝ Խարկովում «...տեղւոյս եւ տաճկահայ երիտասարդութեան գործունէութեան նշանաբանը եղած է ամէն բանէ առաջ փլատակուած հայրենիքի վերաշինութեան ծառայել, սովալլուկ մանուկներին խնամել, անօթիին հաց եւ մերկին զգեստ տալ» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 107*):

Այսպիսով՝ ինչպես ակներեւ է վերոնշյալ շարադրանքից, «Հայաստան» պարբերականը, որը պատմական ասպարեզ եկավ եղեռնից անմիջապես հետո, բնականաբար բացառապես պիտի զբաղվեր այդ կոտորված ու հայրենազրկված ժողովրդի կարիքներով՝ իր էջերում ամրագրելով նաեւ Մեծ եղեռնի վավերագրությունը:

1917 թ. օգոստոսի 23-ին Կարապետ Մանուկյանի ստորագրությամբ «Մեռելոց» ակնարկն ազդարարում էր, որ հոն «չկայ շիրիմներ եւ ոչ ալ տապանաքարեր, ասոնց փոխարէն ընդարձակ տարածութիւնների վրայ տեղ տեղ կը տեսնեմ կմախկացած գանգեր, հողէն դուրս ցցուած հազարաւոր սրունքներու եւ բազուկներու ոսկորներ, կը դիտեմ եւ պահ մը աչքերս կը գոցեմ... Եւ ահա ատոնց եղեռնի յուշարձանը որ այս փշրուն գանկերէն ձեռակերտուած եւ արիւն-արցունքի շաղախով թրծուած է, աչքիս առջեւ կը պատկերանայ «Մեծ Եղեռնի զոհեր» տապանագրով» (*«Հայաստան», 1917 թ., թիվ 101*):

Այո՛, մինչ մեր ժողովրդի հիշողությունը հուշարձան կդառնար Ծիծեռնակաբերդում եւ թրի նման կմխրճվեր երկինք, եղեռնից երկու տարի անց այն հոգեւոր ու բարոյական հուշարձան դարձավ զորավար Անդրանիկի կողմից հիմնադրված «Հայաստան» պարբերականի էջերում՝ որպես զգուշացում, տագնապ ու ճիչ, նաեւ նախատինք՝ ուղղված հանուր մարդկությանը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՄԱՐԿ ԿՈՌԼԵՐ

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏԸ

➥ էջ 5

Ուստի՝ ամեն դեպքում մի ընդհանուր բան կա Մատթեոսի ու Մարկոսի «Աստծո որդի» եւ Ղուկասի «Արդար» արտահայտությունների միջեւ. դրանցից եւ ոչ մեկը քրիստոնեական դավանանք չեն ձեւավորում: Մարդը, որ խոսում է, հեթանոս է: Նա խոսում է որպես հեթանոս, սակայն նա հասկացել է որոշ բաներ:

Քրիստոսի արյունը բացում է նրա աչքերը: Նա սկսում է տեսնել ու տեսողություն է վերադարձնում ուրիշներին: Սենթ Գալլի ավետարանը՝ 7-րդ դարի իռլանդական արվեստի հոյակապ գործը, դա արտահայտում է պատկերագրությամբ. Հիսուսը խաչի վրա է՝ փաթաթված հաստ սավանով: Նրա ծակված կողից արյան մի բարակ շիթ է ցայտում, որը լցվում է կույր հարյուրապետի աչքերի մեջ ու ապաքինում նրան իր կուրությունից: Նման պատկերացման մեջ կա ճշմարտության մասնիկ: Հարյուրապետը հետեւել է Հիսուսի հոգեվարքին: Այդ մահը նրան ցնցել է. այն բացել է իր աչքերը: Ի՞նչ է նա տեսել: Ինչի՞ մասին է հաշիվ տվել իրեն:

Ավետարանիչները, որոնք հիշատակում են հարյուրապետին (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս) տարբեր կարծիքներ են հայտնում նրա միջամտության մասին: Մատթեոսը կարծում է, որ գերբնական երեւույթները, որ ուղեկցում են հոգեվարքին, այդ սպային դրդեցին խոսել: Մարկոսն այդ խոսքերը վերագրում է Հիսուսի արագահաս մահվանը կամ նրա վերջին անձկալի բացականչությանը: Ղուկասի համար հարյուրապետի խոսքերը կապված են այն ամենի հետ, ինչը նա ապրեց իր հսկումի՝ այդքան երկար ժամերի ընթացքում: Այսպիսով՝ այդ մարդն ազդված էր ինչպես մահապատժի հանգամանքներից, այնպես էլ դատապարտյալի վարվելակերպից:

Հանգամանքները. երկիրը դողում է, գերեզմաններն ու Տաճարը երերում են, արեւն անհետանում է, ու խավարը պատում է ամեն ինչ: Բնությունն ինքն է միջամտում: Մի՞թե դա այն բանի նշանը չէ, որ մահապարտը մի էակ է, որի ճակատագիրը կապված է աստվածների ճակատագրին: Հնադարում ասում էին, որ աստվածային բնույթ ունեցող մարդկանց մահը շրջապատված է հրաշքներով: Իր տարրերը շղթայազերծելով՝ բնությունն արժանին է հատուցում, ու բնության արտառոց երեւույթները խորապես ցնցում են սպայի երեւակայությունը: Մարդկանց կողմից ծեծված, մերկացված, խաչված այդ Հիսուսն այլեւս չի կարող պատահական մեկը լինել:

Եվ հարյուրապետը կենտրոնանում է Հիսուսի վարվելակերպի վրա: Հիշում է, թե ինչպես նա հրաժարվեց արբեցնող այն ըմպելիքից, որ երուսաղեմցի կանանց մի խումբ պատրաստում էր ցավերը մեղմելու համար: Հիսուսը հրաժարվեց այդ ցավազրկող միջոցից: Դա արդյո՞ք չէր նշանակում համաձայնել ընդունելու տառապանքը... Հարյուրապետը հիշում է այն ծանր պահը, երբ Հիսուսը խաչվեց ու բարձրացվեց սյան վրա, ինչպես առագաստը՝ կայմի: Սովորաբար զոհերը գոռում էին, ծառս լինում, կծում, աքացի տալիս, հայհոյանքներ ու անեծքներ տեղում դահիճների գլխին: Բայց Հիսուսը ձայն չհանեց: Նա զինվորներին նայում էր բարությամբ, ասես նրանց ցույց տալու համար, որ ինքը չի բարկանում նրանց վրա: Այնուհետեւ Խաչ բարձրանալով՝ նա չի պարփակվում ինքն իր մեջ: Ծաղրի ենթարկվելով ամեն կողմից՝ նա մնում է բաց ուրիշների տառապանքի հանդեպ: Նա կարեկցանքով է նայում դժբախտության իր ուղեկիցներին: Հարյուրապետը չի կարող իր հայացքը հեռացնել: Նա տեսնում է Հիսուսի սառնարյունությունն ու պայծառատեսությունը: Զգում է նրա մեղմությունն ու հանգստությունը: Նա տեսնում է՝ հանուն ուրիշի այդ պատրաստակամությունը ամենամեծ փորձության մեջ: Հարյուրապետը դառնում է հնազանդ՝ Խաչի առաջ:

Հիսուսը մեռնում է: Այդժամ հարյուրապետը դուրս է գալիս իր կլանվածության վիճակից: Նա ասում է այն, ինչը հենց նոր էր հասկացել. այդ Հիսուսը Խաչ բարձրացավ առանց պայքարի: Նա ինչ-որ ծրագիր ուներ. նա հնազանդվում էր: Նա հրամաններ էր ստացել ու դրանք կիառության մեջ էր դնում: Նա այստեղ էր մի առաքելությամբ, որը ղեկավարվում էր: Այդ հոգեվարքի վերեւում սավառնում էր մի կամք, որի պտուղն էր այդ Խաչը: Մահվանը ենթարկվելով՝ Հիսուսը մահն էր դատապարտում:

Հռոմեական բանակի հարյուրապետը գիտի՝ ինչ է կարգապահությունը: Փորձը նրան սովորեցրել է, թե ինչ բան է ղեկավարի իշխանությունը: Նա կարող է դրան ենթարկվել առանց այլեւայլության: «Քանզի ես էլ իշխանության տակ դրված մի մարդ եմ ու հրամանիս տակ զինվորներ ունեմ: Սրան ասում եմ՝ «Գնա՛», ու նա գնում է, իսկ մյուսին՝ «Եկ», ու նա գալիս է, իսկ ծառային՝ «Արա՛ այս բանը, ու նա անում է»: Ահա ինչու Հիսուսն արդար է, այսինքն՝ անշահախնդիր ու շիտակ: Ահա ինչու նա Որդին է Աստծո, այսինքն՝ քաջ է որպես հերոս. նա հնազանդվում է:

Հիմա մեզ համար կատարվում է մի արտակարգ բան. հարյուրապետի վկայությունը, որը շատ հեռու էր թվում քրիստոնեական ամեն մի դավանանքից, մոտենում է դրան: Առանց դա իմանալու՝ այդ հեթանոսն արտահայտում է այն բանի էությունը, ինչն Աստվածշնչի մարդիկ դրել են «Արդարը» եւ «Որդին Աստծո» բառերի մեջ: Քանզի «արդար» բառը խորքային իմաստով նշանակում է «Հիսուսի աստվածվախությունը, որը միայն մեկ նպատակ ունի՝ կատարել Աստծո կամքը», եւ «այն, ինչը բնութագրում է Աստծո Որդուն, դա նրա ընտրյալ լինելու փաստն է՝ կատարելու համար աստվածային մի հատուկ առաքելություն, ինչպես եւ Աստծո կոչին ճշտգրտորեն հնազանդվելու փաստը»: Երկու տիտղոսներն էլ բնորոշում են Օծյալին՝ իր հնազանդության մեջ. իր համար բացահայտելով Հիսուսի հնազանդությունը՝ հարյուրապետը նրա մեջ տեսնում է Օծյալին:

Բայց «Աստծո Որդի» տիտղոսն Աստվածաշնչում մեկ ուրիշ իմաստ էլ ունի: Եթե Հիսուսը հնազանդվում է Աստծուն, ապա նրանից ստանում է պայծառատեսություն ու զորություն: Որդիաբար ենթարկվելով երկնային Հորը՝ Հիսուսը միացյալ է Աստծուն մի խորհրդավոր ու անարտահայտելի եղանակով: Նրանց միջեւ մի անտակ խորության հաղորդակցություն տեղի ունի, որ Հիսուսն արտահայտում է այս բառերով. «Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ Հայրը, ու ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ Որդին...» (Մատթ. ԺԱ 27): «Ես Հոր մեջ եմ, ու Հայրն իմ մեջ է: Ով ինձ տեսավ, Հորս տեսավ: Հայրս ու ես մեկ ենք» (Հովհ. Ժ 30, ԺԴ 9, ԺԴ 10): Հիսուս Քրիստոսի մեջ Աստված Ինքն է, որ գործում է: Նա է առաջնորդում: Նա է թագավորում: Այդ տիտղոսը, որ նշում է Որդու ցածրացումը, ցույց է տալիս նաեւ Նրա հզորությունն ու փառքը: ➥ էջ 8

Գիտատեխնիկական առաջընթացի հետեւանքների բիոէթիկական ուսումնասիրության հիմնահարցեր

➥ էջ 3

Այդ իսկ պատճառով այսօր հարցն այն է, թե ինչպես փոխել մարդուն, նրա բարոյական նկարագիրը, ապրելակերպը՝ կոնֆլիկտի մեջ չմտնելով մարդկային այլ հանրույթների հետ:

Այս հարցերին ուղղված փիլիսոփայական խորհրդածություններում հնչում է բարձրագույն հոգեւորի հավերժական կոչը. չէ՞ որ կյանքի եւ մահվան, կեցության եւ ոչ կեցության, մարդու եւ բնության, կյանքի եւ համակեցության քաղաքակրթական ընդհանուր նորմերի ներդաշնակեցման խնդիրները մարդկանց հոգեւոր որոնումների հավերժական փիլիսոփայական պրոբլեմատիկան են: Նշենք, որ «հավերժական» բառը տվյալ ենթատեքստում նշանակում է ոչ թե ինչ-որ կենսական արժեք-խորհրդի արտաժամանակային անփոփոխ վիճակ, այլ միայն այն, որ յուրաքանչյուր կոնկրետ պատասխանի հետ այդ հարցերը ստանում են տարբեր ձեւակերպումներ:

Այո՛, մարդկությունն իր զարգացման տեմպերով հասել է մի այնպիսի սահմանի, որ երկրի վրա նրա ապագա գոյությունը դարձել է խնդրահարույց: Եթե նախկինում գիտության մեջ որեւէ հայտնագործության եւ նրա պրակտիկ կիրառման գործընթացը տարիներ էր տեւում, ապա այսօր ամիսների կամ նույնիսկ շաբաթների ու օրերի հարց է:

Տեխնիկայի, տեխնոլոգիաների եւ գիտության զարգացման այս արագընթաց տեմպերին զուգահեռ, ցավոք, արագացել են նաեւ մարդկության բարոյական անկման տեմպերը... Պարզ է դարձել, որ գիտության առաջընթացը որոշ իմաստով խոչընդոտում է մարդու երջանկությանն ու ներդաշնակությանը: Ինչ խոսք, այսօրվա մարդու կենցաղային հոգսերը թեթեւացել են, նա հավատում է տեխնիկայի զորությանը, եւ ոմանց կարծիքով՝ դա միակ բանն է, որին նա հավատում է: Մարդը հիացած է իր ողջ կյանքը հեշտացրած տեխնիկայի հզորությամբ: Նա ինքն է այն ստեղծել, եւ դա իր հանճարի, բանականության, հնարամտության արդյունքն է, իր մտքի զավակը (*Мишаткина Т. В. и др., «Биомидицинская этика», Минск, 2003*):

Սակայն մարդուն այսօր չի հաջողվում կառավարել, հսկել, տիրապետել իր ստեղծածի արդյունքները: Տեխնիկան երբեմն մարդուց ավելի ուժեղ է՝ նրան իրեն ենթարկելով: Այն այսօրվա մարդու ամենամեծ հրապուրանքն է, բայց հենց դա էլ մարդուն պատճառում է ցավ եւ հիասթափություն, թուլացնում նրա հոգեկան աշխարհը, սպառնում կործանմամբ, ինչպես դա ընդգծում են մեր դարաշրջանի խոշոր մտածողները՝ Կարլ Յասպերսը, Սեմյոն Ֆրանկը, Նիկոլայ Բերդյաեւը, Ալեքսանդր Ֆիպկոն, Մարտ Նոուտը եւ այլք:

Գիտության ու տեխնիկայի աննախադեպ հաջողությունները ոչ միշտ են օգնում մարդկությանը հուզող խնդիրները լուծելու գործում, ավելին՝ ինչ-որ չափով նաեւ հանգեցնում են ճգնաժամերի խորացմանը:

Եթե նախկինում մարդիկ միավորվել են, ստեղծել մշակույթ, որ իրենց պաշտպանեն բնության հզոր ազդեցությունից, ապա այսօր առկա է հակառակ գործընթացը. *մարդիկ համախմբվում են, միավորվում, որ պաշտպանեն իրենց՝ իրենց իսկ ստեղծած մշակույթի գերհզոր ազդեցությունից:*

Այս ամենի կարեւոր պատճառներից մեկը հոգեւոր առաջընթացի բացակայությունն է. գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների զարգացման եւ մարդու հոգեւոր անկման միջեւ որոշակի կապ է հաստատվել: Այսպիսի պայմաններում գիտատեխնիկական բոլոր ձեռքբերումները (այդ թվում նաեւ բժշկագիտության) առաջադրում են այնպիսի խնդիրներ, որոնք կարիք ունեն մանրակրկիտ վերլուծումների՝ ըստ մարդաբանական եւ բարոյագիտական ընբռնումների: Այստեղ արմատական չափանիշ պետք է լինեն մարդու հոգեմտավոր ամբողջության պահպանումն ու առաջընթացը:

Այո՛, գիտության առաջընթացն ունի իր դրական կողմերը, սակայն դրանք համեմատելի չեն այն պայթյունավտանգ իրավիճակների հետ, որին ապագայում կարող է բախվել մարդկությունը: Նա պարտավոր է վերահսկել տեխնոլոգիաների առաջընթացը՝ պահելով այն *բարոյականի* սահմաններում:

Մարդկության կործանման վտանգը մտահոգում է ոչ միայն հումանիստ գիտնականներին, այլեւ արվեստագետներին ու մտավորականներին:

Իմ չլինելուց ես չեմ վախենում
Ես չեմ վախենում իմ բաժին մահից,
Սակայն ծնկներս դողում են անվերջ
Մեր հոգնահանճար, բայց խեղճ ու անճար
Այս մոլորակի
Անվախճանության
Վախճանի՛ ահից:

Համո Սահյան

1998 թ. հունվարի 12-ին Փարիզում ստորագրվեց մարդու կենսաբանական պլանավորումը (արհեստական մարդու ստեղծումը) արգելող միջազգային արձանագրություն: Դրան մասնակցել են եվրոպական 19 երկրի ներկայացուցիչներ: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն այդ առթիվ մաղթել է, որ համաշխարհային մակարդակով արգելվի «մարդու պլանավորումն ու գենետիկ ձեռնածությունների անցկացումը», որը «կարող է հանգեցնել տագնապալի հետեւանքների» (*Ս. Հ. Դավթյան, «Բիոէթիկայի ներածություն», Եր., 2012*):

Իզուր չէ, որ Եվրախորհրդի կենսաբանական էթիկայի հանձնաժողովը հարկ է համարել ազգային կոմիտեների հատուկ միջազգային խորհրդաժողով հրավիրել խնդրո առարկայի շուրջ:

Մեր ժամանակի ճգնաժամն առավելապես տեխնիկայի ծնունդն է, բայց այն առաջին հերթին հոգեկան ճգնաժամ է: *Տեխնիկան մարդու ձեռքն է տվել այնպիսի ուժ, որը կարող է կործանել նրան: Այն ոչ միայն հաստատում է մարդու իշխանությունը բնության նկատմամբ, այլեւ, ցավոք, մարդու կյանքի նկատմամբ:* Սա նշանակում է, որ մարդը դադարում է հայացքը հառել դեպի իր ներսը, դադարում է ճանաչել ճշմարտությունը: Ըստ հոգեւոր եւ կրոնական տեսակետի՝ այսպիսի պայմաններում կյանքի յուրաքանչյուր ակնթարթ կորցնում է իր արժեքը, կորցնում է կապն Աստծո հետ:

Մարդը չի կարողանում դիմանալ ժամանակի այսպիսի հոսքին, չի հասցնում ըմբռնել կյանքի իմաստը կամ նույնիսկ խորհել դրա մասին: «Բայց մարդն օժտված է բացառիկ ընդունակությամբ՝ վերլուծելու իր կեցությունը եւ շրջապատող իրականությունը, զգալու անարդարությունը, խուսափելու վտանգներից, իր վրա պատասխանատվություն վերցնելու, ձգտելու համագործակցել եւ բարոյական գնահատական տալ անցուդարձին, որի հիման վրա ձեւավորվում են բարոյական սկզբունքները»:

Մարդը մարդ է, քանի դեռ իր մեջ ունի Աստծո պատկերն ու նմանությունը: Իսկ դա ազատության ճիշտ օգտագործումն է, ազատության միջոցով բարին ու ճշմարտությունը ճանաչելու գիտակցությունը: Նրա ապագան պայմանավորված է նրանով, թե կցանկանա կամ կկարողանա արդյոք ուշքի գալ եւ իմաստավորել իր կյանքը:

Երբեւէ հնարավոր չի եղել կանգնեցնել անընդհատ զարգացող գիտության ընթացքը, եթե նույնիսկ վերահաս վտանգով է սպառնացել, ուստի մնում է խելամտորեն այն ծառայեցնել իր ճիշտ նպատակին: Ժամանակակից գիտատեխնիկական զարգացումները եւ փնտրտուքները պետք է իրականացնել եւ կիրառել մարդու հոգեւոր պահանջների շրջանակներում:

Ժամանակի ընթացքում բժշկությունն ունեցել է հիանալի հայտնագործություններ, սակայն դրանք երբեւէ բարոյական այսպիսի խառնաշփոթ, բացարձակ հակառակ, իրարամերժ կարծիքների տեղիք չեն տվել, ինչպես այսօր բիոէթիկայի խնդիրները: *Այս ամենի պատճառը բժշկական տեխնոլոգիաների՝ մարդկային կյանքի կառավարման մակարդակին հասնելն է:* ➥ էջ 8

Գիտատեխնիկական առաջընթացի հետեւանքների բիոէթիկական ուսումնասիրության հիմնահարցեր

➥ էջ 3, 7

Բոլո՞ր ենք հիշում Ա. Շվեյցերի իմաստալից խոսքը. *«Արդյոք ես իրավունք ունե՞մ քաղելու բոլոր այն պտուղները, ինչին ձեռքս հասնում է...»*: Ահա թե որն է խնդիրը, որը, կարելի է ասել, շատ ավելի բարդ է, քան Շեքսպիրի «լինե՞լ, թե՞ չլինել»-ը:

Այո՛, չնայած հասարակական կյանքի շատ բնագավառներում արձանագրվում է առաջադիմություն, սակայն միեւնույն ժամանակ հսկայական են կորուստները:

Մարդկայինի, համամարդկային արժեքների այլափոխումներն ու կորուստը, օգտապաշտությունը, նյութապաշտությունը, «ոգու սովը» արձագանքում են համայն աշխարհում: Այդ մասին չէ՞ արդյոք հանրահայտ քառատողը.

Ես Ձեզ ասում եմ՝ կգա՛ ոգու սով,
Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի քով,
Կընկնեք մուրալու հափրած որկորով
Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ....

Ավ. Իսահակյան

Մարդկության գլխին կախված է իր իսկ ձեռքով իր ոչնչացման վտանգը: Այսօր գերիշխում է օգտապաշտական, տեխնոպաշտական, համակարգչապաշտական մտածողությունը: Զգացմունքը, խիղճը, բարոյականությունը մղված են երկրորդ պլան: Թվում է, թե 21-րդ դարի մասին էին գրում էկզիստենցիալիստները. «Այսօրվա մարդը մոլորված է, տարակուսած, շշկռված, հուսահատ, սոցալիապես անպաշտպան է, օտարված է ինքն իրենից, հասարակությունից, արհեստականորեն իրեն պարտադրված հասարակական հարաբերությունների ներկա տիպից եւ չգիտի, թե դեպի ուր է գնում»:

Երբեւէ պատմության մեջ չեն զուգակցվել *ընդդեմ մարդկության ու հանուն մարդկության* սկզբունքերն ու գործելաձեւը, որքան ներկայումս:

Բայց որպես նշված ընդհանուր իրավիճակի հակադրություն՝ մարդը, մարդու ինքնիշխանությունը, նրա իրավունքներն ավելի քան երբեւէ դարձել են տարբեր գիտությունների ու փիլիսոփայության համակողմանի ուսումնասիրության առարկա:

Պատերնալիզմը (հայրապաշտությունը) դուրս է մղվում ու ավելի ու ավելի են ընդգծվում մարդու՝ ինքնիշխան որոշումներ կայացնելու, իր կյանքի համար վճռորոշ, կարեւոր որոշումներն ինքնուրույն կայացնելու իրավունքները: Ինչպես նաեւ մեծացել է մարդու էության ու կեցության ուսումնասիրության, մարդաճանաչման անհրաժեշտությունը: Այս նպատակի համար օգտագործվում են նաեւ ժամանակակից գիտության ու տեխնիկայի հսկայական հնարավորությունները:

Ներկայումս ավելի է ընդգծվում մարդու փիլիսոփայական ուսումնասիրության անհրաժեշտությունը, ավելի են կարեւորվում հումանիստական մտքի հետաքրքրությունները մարդու ներկայի ու ապագայի նկատմամբ: *Այն ապագայի, որի լինել-չլինելը հարցականի տակ է:*

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

Վաթսունականների արձակագիրներ. *Ժամանակը եւ հերոսը*

➥ էջ 4, 6

Պարուհիները «նայում էին Ադամին եւ անիրական աշխարհի մեջ էին»: Այս դեպքում եւս երեւակայության ստեղծածն իրական գոյություն է ստանում: Բայց դա ոչ թե մտապատրանք է, այլ փաստացի իրականություն: Բայց նաեւ ինչ-որ չափով Ադամը մնում է սոսկ նրանց երեւակայության ոլորտում, քանի որ նա թեեւ կա, այնուամենայնիվ, իրենցը չէ: Եվ պարուհիների մեջ բռնկվում է պոեզիան. կարոտի անորոշ ու թախծոտ գրգիռները, սիրո անթերի ու կատարյալ պատկերացման առկայությունն ամեն մեկի մեջ մի նոր սեր են առաջացնում, նրանց կտրում իրական պահից, վերացարկում, թեւեր տալիս: Նրանցից մեկը՝ Սոֆին, որը բեմահարթակում «Բոլերո» պարելիս զգում էր սոսկ պարընկերոջ «պատրաստի», «աշխատանքային» ժպիտը, այն դեպքում, երբ կուզեր նրա հետ տղամարդու եւ կնոջ «միասնության հիմն» պարել, նույն Սոֆին, որը ներկայացման ժամանակ պարընկերոջ աչքերին նայելիս կարող էր մտքում ասել. «Ինչո՞ւ ես այդքան քաղաքավարի, ինչո՞ւ ես այդքան մենակ», հիմա՝ Ադամի եւ երազների նուրբ ներկայությամբ կտրվում է հարաբերությունների, ցանկությունների առարկայական, իրական գոյությունից եւ հանձնվում է տարերքին: Ոգեշնչման պահին Սոֆին պոկվում է տեղից, շարժումներ անում եւ սկսում է պարել: Կանանցից մեկն սկսում է երգել, մյուսներն աստիճանաբար ձայնակցում են նրան. սիրո ներշնչանքը կենդանություն է տալիս բոլորին, ինչ-որ չափով գինովացնում, կտրում, բարձրացնում հողից եւ նրանց գցում բանաստեղծական վիճակի մեջ: Իսկ երեկոն դառնում է գտնված անակնկալ, երկար սպասված հանդիպում երազային պատկերացումների հետ:

Նուրբ վիճակների վրա են կառուցված նաեւ «Չիխլի» ու «Ձիերին հատկացված ճանապարհը» պատմվածքները: Չիխլին շան անուն է, ծեծված մի շան, որը դեռ հաշիվներ է պարզում աշխարհի հետ հավատարմության եւ անհավատարմության մասին: «Ձիերին հատկացված ճանապարհը» պատմվածքը, ուր ցավ կա անընդհատ նույն ճանապարհով կառքը քաշող ձիերի համար, կարելի է ընկալել եւ ուղղակի իմաստով, եւ փոխաբերական: Ուղղակի՝ ծեծված շան ու խեղճացած, ջրակոլոլ աչքերով ձիու, փոխաբերական՝ տանջված, իր հարաբերություններն աշխարհի հետ չճշտած եւ անընդհատ նույն աշխատանքային ճանապարհով շարժվող, իր աչքերի տակի գետնից բացի՝ ուրիշ ոչինչ չտեսած մարդու մասին: Երկու մոտեցումն էլ կարելի է կիրարկել, այս դեպքում տարբերությունն առանձնապես այնքան էլ մեծ չէ, որովհետեւ Այվազյանը ներկայացնում է վիճակը եւ համապատասխան վիճակների մեջ կարողանում կենտրոնացնել ընդհանրապես տվյալ երեւույթին բնորոշ հոգեբանական եւ իմաստային կողմերը:

Ահա այս տեսակի հերոսներ ու կյանքի վիճակներ է պատկերում Այվազյանը: Անչափ սովորական, նաեւ անսովոր հերոսներ, որոնց անսովորությունը պայմանավորված է անշոշափելին շոշափելի դարձնելու զգացողությամբ: Ու թեեւ Այվազյանի հերոսները ներկայացվում են կյանքը կազմող փոքր ու շարքային դեպքերի շրջանակներում, բայցեւայնպես կարողանում են իրենց մեջ խտացնել մարդկային կյանքին հատկանշական որոշ առանձնահատուկ ու կարեւոր հոգեբանական բնավորության գծեր:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԿ ԿՈՒԼԵՐ

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏԸ

➥ էջ 5, 7

«Աստծո հետ մի եզակի հարաբերությամբ Օծյալն այնքան մոտ է Աստծուն, որ Նա Աստծուն ունի իր մեջ. Աստված, Ով ամեն ինչ կիսում է Նրա հետ, անգամ իր գահը»: Արդ, երկրորդ անգամ է տեղի ունենում այդ արտառոց բանը. առանց դա իմանալու՝ հարյուրապետն արտահայտում է այն ամենը, ինչը քրիստոնեական Եկեղեցին կարող է դնել «Աստծո Որդի» անվան մեջ: Նա դա ասում է ոչ այնքան բառերով: Ավելի շուտ՝ նրա անձն է խոսում: Զինվորը՝ հեթանոսը, արտահայտվում է: Դա մի ողջ ուղերձ է:

Մարդը զինվոր է, իսկական հռոմեական զինվոր, գուցե լեգիոներ... Լատերանի թանգարանում կա 340 թվականի մի քրիստոնեական քարադամբան եւ ներկայացնում է մի զինվորի, որը Հիսուսի գխին պսակ է դնում: Բայց այն փշե պսակ չէ, այլ հյուսված է դափնու տերեւներից: Զինվորը կրում է լեգիոների համազգեստ: Ակնարկը պարզ է. կայսրն այդպիսին հայտարարվում էր լեգիոնների կողմից: Լեգիոնների կողմից է Քրիստոս ճանչվում ու հայտարարվում տիեզերքի կայսր: Եթե հարյուրապետը Պիղատոսի սպայակույտից էր, ուրեմն մենք իրավունք ունենք նրա վկայությունն ընդունելու այդ կերպ: Իր ամենաստորին նվաստացման պահին Հիսուս հայտարարվում է Բարձրյալն Աստված: Ստրուկը տեր է, ծառան՝ թագավոր: Պարտությունը կլանված է հաղթանակի մեջ, ու քավությունը, որ անմեղը ձեռք է բերում Խաչի վրա, վերաբերում է ողջ աշխարհին:

Հարյուրապետը դրսից է եկել՝ Հռոմից կամ կայսրության որեւէ այլ վայրից: Նա չգիտե՝ ով է Իսրայելի Աստվածը: Նա անտեղյակ է ընտրյալ ժողովրդի հույսերից: Ու որքան որ ինքն է ի վիճակի հասկանալու ու արտահայտելու՝ վկայում է Քրիստոսին: «Այդ մարդու մեջ Մարկոսը տեսնում է առաջին հեթանոս քրիստոնյային, անթիվ բազմության նախորդին, որ կանգնած է Աստծո թագավորության դռան

շեմին»,— ասում է Գյունտեր Դեհոն իր մեկնաբանության մեջ: Այո՛, հարյուրապետն ինքը չէր կարող կռահել իր վկայության նշանակությունը: Բայց Մարկոսը դա տեսնում է, ու նրա հետ՝ Մատթեոսը, որի համար այդ խոստովանությունը միայն մեկ անձի խոստովանություն չէ. մահապատիժ կիրառող վաշտի բոլոր զինվորներն ընդունում են իրենց հրամանատարի դիրքորոշումը... Մատթեոսը խոսում է հանրութային պատվի մասին, որը նախակարապետն է ազգերի կողմից հատուցվելիք պատվի: Հին Եկեղեցին դա հասկացել էր, ինչպես եւ ավետարանիչները: Centurio fidem gentium significat (հարյուրապետը խորհրդանշում էր ազգերի հավատքը): Հարյուրապետը ներկայացնում ու ազդարարում է հեթանոսների դարձի գալը: Մեր օրերի Եկեղեցին պիտի հիշի դրա մասին:

Պատահականություն չէ, որ հարյուրապետը խոսում է այն ժամանակ, երբ Հիսուսը հոգին ավանդել է արդեն: Քանզի ազգերի Ավետարանն ազդարարելուց առաջ պետք էր, որ Քրիստոսի գործը Երուսաղեմում կատարվեր: Եթե Հիսուսը միանգամայն զուսպ էր հեթանոսների հարցում, ապա նրա համար, որ նա գիտեր այդ «նախ եւ առաջ»-ի հրամայականը. նախ եւ առաջ՝ պետք է, որ մարդու որդին մահվան դատապարտվի: Կափառնայումի հարյուրապետը դողում է ոչ պատահականորեն: Այդ պահին հեթանոսների ժամանակը դեռ չէր եկել: Քանանացի կինն իրավացի է, որ պնդում է: Քանզի այդ պահին հեթանոսները կարող են ստանալ լոկ փշրանքներ: Հիսուսը սահմանափակվում է Իսրայելով, որովհետեւ նա այնտեղ պետք է անի հիմնականը: Մահանալով՝ նա լայնացնում է շրջանակը: Հիմա, երբ զոհաբերությունն ընծայված է, խաղաղությունը՝ վերահաստատված, ներումը՝ ձեռք բերված, երկինքը՝ բացված, կարելի է ու պետք է դա ասել բոլորին: Խաչը հիմնում է առաքելությունը, կամ ըստ Բ. Սունդկլերի գեղեցիկ արտահայտության՝ «Խաչի ճանապարհը առաքելության ճանապարհն է»:

Այդ առաքելությունը, ինչպես ասում է Հերբերտ Ռուքսը, մաս է կազմում ոչ թե Եկեղեցու «բարօրության», այլ՝ Եկեղեցու կեցության: Ուզենք դա թե ոչ՝ մեզ է վստահված հեթանոս աշխարհին այստեղ ու ամենուր Աստծո սերն ազդարարելու առաքելությունը:

Խաչի տակ կանգնած հարյուրապետը դա հիշեցնում է մեզ:

Ֆրանսերենից թարգմանությունը՝
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.12.2021 թ.
Տպաքանակը՝ 1225